

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022
02.2022
03.2022
04.2022
05.2022
06.2022
07.2022
08.2022
09.2022
10.2022
11.2022
12.2022
Դեկտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 31-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Դեկտեմբեր

թիվ 12 (292)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԷԼԵԳԱՆՏ ՌԵՍՈՐՏ» ՍՊԸ-ին, «ԱՆՈՒՇ» տրիկոտաժի արտադրական միավորում ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ն գրանցելու և ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» ՓԲԸ-ն գրանցելու և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԷՆԴՐՅՈՒ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ՎՈԼՏԱ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ թիվ 29, Տիգրան Մեծ, Դիլիջան, Թալին, թիվ 76, Թումանյան, Բերդ, Բաղրամյան, Ագարակ, Արարատ և թիվ 83, «ԻՆԵԿՈ-ԲԱՆԿ» ՓԲԸ «Հրազդան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Էյ Բի Ինվեստ» ՍՊԸ ներդրումային ընկերությանը լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԻՆԵԿՈԲԱՆԿ» «Դավթաշեն», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «Ավան» մասնաճյուղերը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 213Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 214-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 215-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 216-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

53 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 217-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

84 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 218-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 103-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

86 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 219-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

102 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 220-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

122 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 221-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

138 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 222-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

157 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 223-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

176 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 224-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

186 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 225-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

202 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 226-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

206 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի թիվ 65-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

207 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 228-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

212 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 229-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

214 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԷԼԵԳԱՆՏ ՌԵՍՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «ԱՆՈՒՇ» տրիկոտաժի արտադրական միավորում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 230Ա, 240Ա):
- ***Գրանցվել և ներդրումային ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «Լիմիթլես ասեթ մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 235Ա):
- ***Գրանցվել և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 236Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԷՆԴՐՅՈՒ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ՎՈԼՏԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 237Ա, 239Ա):
- ***Թույլատրվել է*** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության թիվ 29, Տիգրան Մեծ, Դիլիջան, Թալին, թիվ 76, Թումանյան, Բերդ, Բաղրամյան, Ագարակ, Արարատ և թիվ 83, «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/610Ա, 1/634Ա):
- ***Լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «Էյ Բի Ինվեստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ներդրումային ընկերությանը (որոշում թիվ 1/615Ա):
- ***Գրանցվել են*** «ԻՆԵԿՈԲԱՆԿ» «Դավթաշեն», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Ավան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/622Ա, 1/627Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 14 000 000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/588Ա), 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/613Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 13-ի թիվ 213Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 12.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 9,25%:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով խթանելու կարգավորվող շուկայում առևտուրը՝ ապահովելով կարգավորվող շուկայում առևտրին մասնակցող կազմակերպությունների նկատմամբ կարգավորման միանման պահանջներ, բարձրացնելու վարկային կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը, 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «դ2» կետերը և 3.1-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 14-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետի «զ» ենթակետում «բացառությամբ սույն կանոնակարգի 7.1-րդ կետով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «ինչպես նաև կանխիկ ձևով գնել և/կամ վաճառել արտարժույթ սույն կանոնակարգի 8.4-րդ կետով սահմանված դեպքում» բառերով:
2) Կանոնակարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» պարբերությամբ.

   «գ.ապահովված հիպոտեկային պարտատոմսեր՝ «Ապահովված հիպոտեկային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն.»:
3) Կանոնակարգի 6.2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:
4) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.8-րդ, 6.9-րդ, 6.10-րդ և 6.11-րդ կետերով.

   «6.8. Վարկային կազմակերպությունները, երաշխիք (երաշխիքներ) տրամադրելու դեպքում, պարտավոր են ունենալ երաշխիքի տրամադրման և սպասարկման գործառույթը կանոնակարգող ներքին իրավական ակտեր, որոնցում առնվազն պետք է նշված լինեն երաշխիքի տրամադրման և սպասարկման պայմանները:

   6.9. Վարկային կազմակերպությունները չեն կարող իրենց հաճախորդների և մասնակիցների համար բացել և վարել բանկային հաշիվներ: Վարկային կազմակերպություններն անկանխիկ դրամական հաշվարկները կատարում են վարկային կազմակերպությանը սպասարկող բանկի միջոցով:

   6.10. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպության համար բացել և վարել հատուկ հաշիվներ՝ ապահովելու առանձին վճարահաշվարկային համա-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. նոյեմբերի 29-ին (ՀՀԳՏ, 08.12. 2022):

կարգերում վերջնահաշվարկների կատարումը, եթե վարկային կազմակերպությունը տվյալ վճարահաշվարկային համակարգի մասնակից է, և վերջնահաշվարկները կատարվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով:

6.11. Հաշվետեր վարկային կազմակերպությունները պարտավոր են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում հաշվի բացման մասին տասն աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:»:

5) Կանոնակարգի 7-ից 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

ԳԼՈՒԽ 2.1

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

7. Սույն կանոնակարգի իմաստով կարգավորվող շուկա է համարվում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով սահմանված համակարգը:

7.1. Սույն կանոնակարգի իմաստով՝ տեղաբաշխող է համարվում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով սահմանված անձը:

7.2. Սույն կանոնակարգի իմաստով՝ շուկա ստեղծող է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի ««Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» կանոնակարգ 4/17-ը հաստատելու մասին» թիվ 288-Ն որոշմամբ հաստատված «Գնային չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, գնային չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և գնային չարաշահում չհամարվող դեպքերն ու գործողությունները» կանոնակարգ 4/17-ի 2-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված անձը:

7.3. Վարկային միությունները և խնայողական միությունները կարող են կարգավորվող շուկայից դուրս իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարել, իրենց հաշվին և իրենց անունից ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կնքել միայն այն դեպքում, եթե նրանց ընդհանուր կապիտալը կազմում է առնվազն 100 միլիոն դրամ:

7.4. Վարկային կազմակերպությունները կարող են մասնակցել կարգավորվող շուկայում առևտրին օրենսդրությամբ նախատեսված գործարքներ իրականացնելու համար միայն այն դեպքում, եթե նրանց ընդհանուր կապիտալը կազմում է առնվազն 300 միլիոն դրամ:

7.5. Այն վարկային կազմակերպությունները, որոնք մասնակցում են կարգավորվող շուկայում առևտրին, արժեթղթերով կնքված գործարքների մասով պետք է վարեն գրանցումներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ի գլուխ 13-ով սահմանված պահանջների համաձայն:

ԳԼՈՒԽ 2.2
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

7.6. Վարկային կազմակերպությանն արգելվում է սույն կանոնակարգին հակասող պայմաններով պարտատոմս թողարկել:

7.7. Վարկային կազմակերպության պարտատոմսերը կարող են շրջանառվել միայն վարկային կազմակերպության մասնակիցների, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի:

7.8. Վարկային կազմակերպությունները (բացառությամբ վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների) կարող են պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով փոխառություն ներգրավել միայն կարգավորվող շուկայում:

7.9. Վարկային կազմակերպությունների՝ կարգավորվող շուկայում գնված պարտատոմսերի հետագա վերավաճառքը իրականացվում է միայն կարգավորվող շուկայում:

7.10. Պարտատոմսերը կարգավորող շուկայում տեղաբաշխելու՝ սույն գլխով սահմանված պահանջը չի տարածվում տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողի կողմից կամ շուկա ստեղծողի կողմից իր գործառույթների իրականացման նպատակով վարկային կազմակերպությունից կարգավորվող շուկայից դուրս պարտատոմսերի ձեռքբերման դեպքերի վրա, եթե դա նախատեսված է այդ արժեթղթերի առաջարկի ազդագրով:

7.11. Վարկային կազմակերպությունները կարգավորվող շուկայից դուրս պարտատոմսերի ոչ հրապարակային տեղաբաշխում կարող են իրականացնել միայն իրավաբանական անձանց, իրենց մասնակիցների, անհատ ձեռնարկատերերի, Հայաստանի Հանրապետության և համայնքների, այլ պետությունների, միջազգային կազմակերպությունների շրջանակում, ընդ որում, նման պարտատոմսերը պետք է պարունակեն «Փոխանցելի չէ ֆիզիկական անձանց» մակագրությունը:

ԳԼՈՒԽ 2.3
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

7.12. Խնայողական միությունները և վարկային միությունները չեն կարող պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավել:

7.13. Լիզինգային կազմակերպությունները, ֆակտորինգային կազմակերպությունները, ունիվերսալ վարկային կազմակերպությունները և վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ թողարկող վարկային կազմակերպություն) կարող են պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավել, եթե Կենտրոնական բանկում վարկային կազմակերպությունների վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ Պատասխանատու ստորաբաժանում) կողմից առկա չէ այդ գործընթացի վերաբերյալ առարկություն:

7.14. Պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու մտադրություն ունեցող թողարկող վարկային կազմակեր-

պությունը մինչ հրապարակային տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ազդագրի ներկայացումը Կենտրոնական բանկ, դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ նշելով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու մտադրության մասին:

7.15. Պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով Կենտրոնական բանկ դիմում կարող է ներկայացնել այն թողարկող վարկային կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ (սույն կետի պահանջները չեն տարածվում թողարկող հանդիսացող վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների նկատմամբ).

1) դիմումը ներկայացնելուն նախորդող առնվազն վեց ամսվա ընթացքում թողարկող վարկային կազմակերպության նկատմամբ կիրառվել են սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված բոլոր հիմնական տնտեսական նորմատիվները,
2) ընդհանուր կապիտալը դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում է առնվազն 1 միլիարդ ՀՀ դրամ:

7.16. Պատասխանատու ստորաբաժանումը բավարարում է թողարկող վարկային կազմակերպության կողմից ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու դիմումը, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

1) թողարկող վարկային կազմակերպությունը դիմումը ներկայացնելուն նախորդող վերջին վեց ամսվա ընթացքում չի խախտել վարկային կազմակերպությունների համար սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկը (սույն պայմանը չի տարածվում թողարկող հանդիսացող վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների նկատմամբ),
2) վերջին մեկ տարվա ընթացքում թողարկող վարկային կազմակերպությունը թույլ չի տվել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի դրույթների էական խախտումներ,
3) թողարկող վարկային կազմակերպությունում առկա են պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու հետևանքով առաջացող նոր (լրացուցիչ) ռիսկերի զսպման և կառավարման համապատասխան մեխանիզմներ, ընթացակարգեր (վարկերի տրամադրման, պարտատոմսերի թողարկման, իրացվելիության կառավարման),
4) պարտատոմսերի թողարկումը չի պարունակում ռիսկեր Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության համար:

7.17. Պատասխանատու ստորաբաժանումը կարող է մերժել թողարկող վարկային կազմակերպության պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելու վերաբերյալ դիմումը 30-օրյա ժամկետում՝ վերջինիս ուղարկելով գրություն՝ հստակ նշելով մերժման հիմքերը: 30-օրյա ժամկետում մերժելու վերաբերյալ գրություն չստանալու դեպքում, թողարկող վարկային կազմակերպության կողմից պարտատոմսերի թողարկման և հրապարակային տեղաբաշխման դիմումը համարվում է բավարարված:

7.18. Որոշակի տեղեկություններ ստանալու համար, պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ, սույն կանոնակարգի 7.14-րդ կետով սահմանված դիմումի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել մինչև անհրաժեշտ տեղեկությունների ստացումը: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո դիմումի քննության վերսկսման որոշման պահից ժամկետը

չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

7.19. Թողարկող վարկային կազմակերպությունը կարող է պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնել դիմումը բավարարված համարվելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետից ուշ պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու դեպքում թողարկող վարկային կազմակերպությունը պարտավոր է կրկին Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կարգի 7.14-րդ կետով նախատեսված դիմումը:

7.20. Պատասխանատու ստորաբաժանման կողմից թողարկող վարկային կազմակերպության ներկայացրած դիմումը մերժելու դեպքում, թողարկող վարկային կազմակերպությունը կրկին կարող է սույն կանոնակարգի 7.14-րդ կետով սահմանված դիմումը ներկայացնել Կենտրոնական բանկ ոչ շուտ, քան նախորդ դիմումը մերժելու օրվանից 3 ամիս հետո:

7.21. Թողարկող վարկային կազմակերպությունը պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու միջոցով ֆիզիկական անձանցից փոխառություն ներգրավելիս պարտավոր է պարտատոմս թողարկելու ազդագրում ներառել դրույթ այն մասին, որ.

1) պարտատոմսերի մարումը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից,
2) պարտատոմսերի մեկից ավելի փուլերով տեղաբաշխում իրականացնելու դեպքում այդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում վարկային կազմակերպության կողմից սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվը (նորմատիվները) խախտելու դեպքում հաջորդ տեղաբաշխման (տեղաբաշխումների) իրականացումը սահմանափակվելու է:

7.22. Թողարկող վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը պետք է կազմի առնվազն 1 միլիարդ ՀՀ դրամ մինչև պարտատոմսերի հրապարակային թողարկման և տեղաբաշխման արդյունքում փաստացի տեղաբաշխված բոլոր պարտատոմսերի ամբողջությամբ մարումը: Ընդ որում, եթե տվյալ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվում է մեկից ավելի փուլերով և այդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում վարկային կազմակերպությունը խախտում է սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվ (նորմատիվներ), ապա վարկային կազմակերպությանը չի թույլատրվում իրականացնել հաջորդ տեղաբաշխումը (տեղաբաշխումները) մինչ սույն կանոնակարգի 7.23-րդ կետով սահմանված պայմանի ապահովումը:

7.23. Վարկային կազմակերպությունը կարող է իրականացնել տվյալ թողարկման պարտատոմսերի հաջորդ տեղաբաշխումը (տեղաբաշխումները), եթե սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվը կամ նորմատիվները խախտելուն հաջորդող 6 ամսվա ընթացքում չի խախտում սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկը:

7.24. Թողարկող վարկային կազմակերպության նկատմամբ, ֆիզիկական անձանցից փոխառություններ ներգրավելու նպատակով պարտատոմսերի թողարկում և հրապարակային տեղաբաշխում իրականացնելու դիմումը ներկայացնելուց հետո 30-օրյա ժամկետում մերժման վերաբերյալ գրություն չստանալու դեպքում, շարունակում են կիրառվել սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված բոլոր հիմնական տնտեսական նորմատիվները՝ մինչև պարտատոմսերի հրապարակային թողարկման և տեղաբաշխման արդյունքում փաստացի տեղաբաշխված բոլոր պարտատոմսերի ամբողջությամբ մարումը: Ընդ որում, 7.14-րդ կետով նախատեսված դիմումը բավարարված

համարվելու օրվանից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 12%:

ԳԼՈՒԽ 2.4
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

8. Վարկային միություններն ու խնայողական միությունները ֆիզիկական անձ հանդիսացող իրենց մասնակիցներից կարող են ներգրավել փոխառություն միայն այն դեպքում, եթե տվյալ մասնակցի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 5 տոկոս: Ընդ որում, փոխառության պայմանագրում պետք է անպայման դրույթ պարունակվի այն մասին, որ ներգրավված փոխառության վերադարձը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

8.1. Լիզինգային կազմակերպությունները, ֆակտորինգային կազմակերպությունները, ունիվերսալ վարկային կազմակերպությունները և վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունները ֆիզիկական անձ հանդիսացող իրենց մասնակիցներից կարող են ներգրավել փոխառություն միայն այն դեպքում, եթե տվյալ մասնակցի մասնակցությունը վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում կազմում է առնվազն 5 տոկոս կամ եթե փոխառության գումարը կազմում է առնվազն 30 միլիոն ՀՀ դրամ: Ընդ որում, փոխառության պայմանագրում պետք է անպայման դրույթ պարունակվի այն մասին, որ ներգրավված փոխառության վերադարձը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

8.2. Լիզինգային կազմակերպության, ֆակտորինգային կազմակերպության կամ ունիվերսալ վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում 5 տոկոսից փոքր մասնակցություն ունեցող ֆիզիկական անձ մասնակցից 30 միլիոն ՀՀ դրամ կամ ավելի փոխառություն ներգրավելու դեպքում լիզինգային կազմակերպության, ֆակտորինգային կազմակերպության կամ ունիվերսալ վարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը պետք է կազմի առնվազն 1 միլիարդ ՀՀ դրամ մինչև նմանատիպ փոխառության ամբողջությամբ մարումը: Ընդ որում, փոխառության պայմանագրում պետք է անպայման դրույթ պարունակվի այն մասին, որ ներգրավված փոխառության վերադարձը չի երաշխավորվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

8.3. Սույն կանոնակարգի 8.1-րդ կետով սահմանված պահանջները չեն տարածվում սույն կանոնակարգի 7.13-րդ կետի համաձայն պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում իրականացնելու դեպքերի վրա:

ԳԼՈՒԽ 2.5
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒԹԻ ԱՌՈՎԱՃԱՌՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

9. Վարկային կազմակերպությունները կարող են կանխիկ ձևով գնել և/կամ վաճառել արտարժույթ, բացառությամբ վարկային միությունների և խնայողական միությունների, որոնք կանխիկ ձևով կարող են գնել և/կամ վաճառել արտարժույթ միայն այն դեպքում և այն չափով, որն անհրաժեշտ է իրենց կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար:

9.1. Եթե լիզինգային կազմակերպությունները, ֆակտորինգային կազմակերպությունները և ունիվերսալ վարկային կազմակերպությունները իրենց կանոնադրության համաձայն կանխիկ ձևով գնում և/կամ վաճառում են արտարժույթ (բացառությամբ այն դեպքերի, երբ արտարժույթի առուվաճառքն իրականացվում է իրենց կողմից տրամադրված վարկերի մարումը սպասարկելու համար), ապա նրանց նկատմամբ պետք է կիրառվեն սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված բոլոր հիմնական տնտեսական նորմատիվները, ընդ որում, նրանց ընդհանուր կապիտալի նվազագույն չափը պետք է կազմի առնվազն 1 միլիարդ ՀՀ դրամ:

9.2. Վարկային կազմակերպություններն արտարժույթի առուվաճառքի կանխիկ գործարքներ իրականացնելիս կարող են կլորացնել գործարքի արժեքը 5000 ՀՀ դրամի շրջանակներում:»:

6) Կանոնակարգի 23-րդ կետի 13-րդ ենթակետում «ՍԴՌ-ի զամբյուղի մեջ մտնող» բառերը փոխարինել «առաջին խմբի մեջ մտնող» բառերով:
7) Կանոնակարգի 33-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
8) Կանոնակարգի 43.1-րդ կետում «ՍԴՌ-ի» բառը փոխարինել «հատուկ փոխառության իրավունքի (SDR)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյան
2 դեկտեմբերի 2022 թ., N 210-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստել ղեկավարների որակավորման մասնագիտացված գործառույթի զարգացմանը և կայացման խթանների ստեղծմանը, համապատասխանեցնել ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման մոտեցումները վերահսկողության միջազգային սկզբունքներին, հնարավորություն տալ ֆինանսական կազմակերպություններին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում, ներդնել ֆինանսական կազմակերպություններում ղեկավարների փոխարինելիության ճկուն մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել արդյունավետ ընթացակարգ՝ բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 22-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 33-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությունը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ կետը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ աշխատակիցներին ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 41-Ն որոշումը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

---

* *Ոչ պաշտոնական հրապարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

1) Կանոնակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն կանոնակարգը սահմանում է.

1) Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի լիցենզիա ստանալու նախնական հավանության, գրանցման և լիցենզավորման կարգը,

2) Բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերի, բանկերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը,

3) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման համար Կենտրոնական բանկի կողմից համաձայնություն ստանալու կարգը,

4) Վարկային կազմակերպությունների գործունեության տեսակի փոփոխման, վարկային կազմակերպություններին գրանցման վկայականի և բանկային գործունեության լիցենզիայի տրամադրման կարգը,

5) Բանկերի մասնաճյուղերի, բանկերի և օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը,

6) Բանկերի մասնաճյուղերի, բանկերի և օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գործունեության դադարեցման կարգը,

7) Գրանցման վկայականի և բանկային գործունեության լիցենզիայի կորստի, ոչնչացման և օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում կրկնօրինակի ստացման կարգը,

8) Գրանցման վկայականը և բանկային գործունեության լիցենզիան Կենտրոնական բանկ վերադարձնելու կարգը,

9) Բանկի կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետությունների և ֆիզիկական անձանց կողմից ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,

10) Բանկի կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետությունների և ֆիզիկական անձանց կողմից անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,

11) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության հետ կապված այլ դրույթները,

12) Բանկի կանոնադրական կապիտալում այլ մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերը,

13) Բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող և նրանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները,

14) Ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման կարգը,

15) Գրանցման ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,

16) Գրանցման ոչ ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,

17) Ներդրումային գործունեության հետ կապված գործարքի կամ գործառնությունների իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու կարգը,

18) Բանկի տարածքից դուրս ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը,

19) Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի, բանկի տարածքային ստորաբաժանումների տարածքի և տեխնիկական հագեցվածության պահանջները:»,

2) Կանոնակարգը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-21.4-րդ կետերով.

«21.1.Բանկի մասնաճյուղի՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի միայն 5-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական գործառնությունները (բացառությամբ՝ բանկային հաշիվների, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվների բացման, վարման, սպասարկման) և/կամ 11-րդ ենթակետով նախատեսված ֆինանսական գործառնությունները իրականացնելու դեպքում բանկի մասնաճյուղի կառավարիչը կարող է միաժամանակ հանդիսանալ նաև այլ՝ սույն կետով նախատեսված գործառնություններ իրականացնող մասնաճյուղերի կառավարիչ:

21.2. Եթե բանկի մասնաճյուղն իրականացնում է սույն կանոնակարգի 21.1-ին կետով նախատեսված ֆինանսական գործառնություններից բացի այլ գործառնություններ, ապա այդ մասնաճյուղի կառավարիչը չի կարող միաժամանակ հանդիսանալ նաև այլ մասնաճյուղերի կառավարիչ:

21.3. Բանկի գլխամասի և բանկի մասնաճյուղի միջև իրական ժամանակի ռեժիմով (մասնաճյուղում կատարվող գործարքները ակնթարթային արտացոլվում են ընդհանուր տեղեկատվական բազայում և բանկի հաշվեկշռում) գործունեություն ծավալելու համար կապի առկայության դեպքում՝ բանկի մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ:

21.4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ աշխատակիցներին ղեկավար համարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 41Ն որոշման 1-ին կետով սահմանված դիլերի որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կանոնակարգերի համաձայն: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կանոնակարգերի համաձայն որակավորման չափանիշներին բավարարելու դեպքում համարվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող:»,

3) Կանոնակարգի 22-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Ղեկավար»՝ Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավարներ, մասնավորապես, բանկի խորհրդի անդամներ, գործադիր տնօրեն (վարչության նախագահ), նրա տեղակալներ, բանկի տնօրինության (վարչության) անդամներ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ, գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ղեկավար, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար (այսուհետ՝ ներքին դիտարկումների մարմնի ղեկավար), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» հաստատելու մասին» թիվ 146-Ն որոշման հիման վրա և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ աշխատակիցներին ղեկավար համարելու և Հայաս-

տանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» թիվ 41-Ն որոշմամբ ղեկավար ճանաչված անձինք:»,

բ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) «Ֆինանսական վիճակի վատթարացման առկայություն կամ հնարավորություն»՝ այնպիսի իրավիճակ, երբ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված բանկի գործունեության ամփոփ գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից:»,

գ. 14-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած,

դ.15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) «Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»՝ անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները, և որի վրա տարածվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, բացառությամբ 2-րդ մասի «դ» կետի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»,

ե. 16-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած,

զ. 18-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18) «Որակավորման չափանիշներ»՝ բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ:»,

է.18-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 19-20-րդ ենթակետերով.

«19) «Մասնագիտական համապատասխանության չափանիշներ»՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,

20) «Որակավորող կազմակերպություն»՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող՝ բանկի կողմից ընտրված կազմակերպություն:»,

4) Կանոնակարգի 31-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1.» պարբերությամբ.

«բ.1.Ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, քրեական գործով ներգրավված չէ որպես մեղադրյալ, ճանաչված չէ սնանկ:»,

5) Կանոնակարգի 36-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետի «գ» պարբերությունը ճանաչել ուժը կորցրած,

բ. 2-րդ ենթակետը «անդորրագիրը» բառից հետո լրացնել «մասնաճյուղի գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը:» բառերով,

6) Կանոնակարգի 39-րդ կետում՝

ա. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչության ղեկավար նշանակելու մասին (օտարերկրյա բանկի համար):»,

բ. 4-րդ ենթակետը «Հավելված 20-ի» բառերից հետո լրացնել «(օտարերկրյա բանկի համար)» բառերով,

գ. 5-րդ ենթակետը «անդորրագիրը» բառից հետո լրացնել «, ներկայացուցչության գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը» բառերով,

7) Կանոնակարգի 42-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Բանկի մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:»,

8) Կանոնակարգի 49-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:»,

9) Կանոնակարգի 95-րդ կետի 1-ին ենթակետում «Հավելված 31-ի» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» բառերը,

10) Կանոնակարգի 100-րդ կետի 1-ին ենթակետում «Հավելված 31-ի» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» բառերը,

11) Կանոնակարգը գլուխ 17-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ գլուխ 17.1-ով՝

«ԳԼՈՒԽ 17.1. ԲԱՆԿԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

107.1. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը (այսուհետ սույն գլխում՝ բանկ) պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափանիշներով բանկի իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ բանկի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

107.2. Սույն կանոնակարգի 107.1-ին կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար բանկը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել բանկի իրական շահառու:

107.3. Սույն կանոնակարգի 107.2-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում բանկը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև բանկի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել բանկի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Բանկին արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

107.4. Բանկը պարտավոր է իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացնել հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 45-ի:

107.5. Սույն կանոնակարգի 107.4-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ բանկի իրական շահառու համարվելու մասին բանկի տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

107.6. Անկախ սույն կանոնակարգի 107.5-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը բանկը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
2) փոփոխված տեղեկություններ բանկի իրական շահառուների վերաբերյալ:»,

12) Կանոնակարգը 113-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 113.1-ին կետով.

«113.1. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 108-րդ, 109-րդ և (կամ) 110-րդ կետերով նախատեսված հաշվետվությունների համար այդ կետերով սահմանված անձանց գրանցման երկրի օրենսդրությամբ չի պահանջվում անկախ աուդիտորական եզրակացություն, ապա դրանց փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում ֆինանսական հաշվետվությունները՝ առանց աուդիտորական եզրակացության: Ընդ որում, եթե գրանցման երկրի օրենսդրությամբ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության համար սահմանված է ավելի ուշ ժամկետ, քան նախատեսված է սույն կանոնակարգի 108-րդ կետով, ապա բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան ֆինանսական հաշվետվություններն ու աուդիտորական եզրակացությունը՝ գրանցման երկրի օրենսդրությամբ ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության համար սահմանված ժամկետից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:»,

13) Կանոնակարգի 5-րդ բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ V. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

14) Կանոնակարգի 114-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«114.Ղեկավարները պետք է բավարարեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ունենան բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:»,

15) Կանոնակարգի 115-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«115. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն՝

1. ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը,
2. ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:»,

16) Կանոնակարգի 116-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«116. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:»,

17) Կանոնակարգի 116.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«116.1. Որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը իր կողմից հաստատված ներքին կանոնակարգով պետք է սահմանի որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը:»,

18) Կանոնակարգի 116.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«116.2. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարի մասնագիտական և որակավորման համապատասխանության չափանիշները և Կենտրոնական բանկում գրանցման պահանջները և ընթացակարգերը տարածվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» հաստատելու մասին» թիվ 146-Ն որոշման հիման վրա ղեկավար ճանաչված անձի վրա (բացառությամբ՝ բանկում որոշում կայացնող դիլերի, որի վրա տարածվում են միայն սույն կանոնակարգով սահմանված որակավորման համապատասխանության չափանիշները՝ համաձայն սույն կանոնակարգի 21.4-րդ կետի):»,

19) Կանոնակարգի 117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«117. Նոր ստեղծվող բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների որակավորման չափանիշների համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կողմից կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:»,

20) Կանոնակարգի 118-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«118. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար համարվող անձանց որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին կանոնակարգերի համաձայն՝ ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:»,

21) Կանոնակարգի 118.1-ին և 119-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

22) Կանոնակարգի 120-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«120. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ խորհրդի կազմը պետք է ապահովի խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձառության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքի կիրառելիությունը:»,

23) Կանոնակարգի 121-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«121. Կենտրոնական բանկը կարող է բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում:»,

24) Կանոնակարգի 122.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«122.1. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ղեկավարների դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ:»,

25) Կանոնակարգի գլուխներ 20-ը, 21-ը, 22-ը, 23-ը, 24-ը, 25-ը, 26-ը, 27-ը ճանաչել ուժը կորցրած,

26) Կանոնակարգի 178-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«178.Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարը պետք է.

1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,

2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի բանկի գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:»,

27) Կանոնակարգի 179-րդ, 180-րդ, 181-րդ, 182-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

28) Կանոնակարգի գլուխ 29-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 29. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ»,

29) Կանոնակարգի 183-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«183.Կենտրոնական բանկում գրանցվում են միայն սույն կանոնակարգով ղեկավար համարվող անձանց կազմում կատարված փոփոխությունները:»,

30) Կանոնակարգի 184-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«184.Ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 195-րդ կետով սահմանված դեպքերի:»,

31) Կանոնակարգի 185-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«185. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ Հավելված 10-ի,

2) ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 11-ի, ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում նաև՝ այն երկրի, որի ռեզիդենտն է հանդիսանում գրանցվող ղեկավարը, համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, քրեական գործով ներգրավված չէ որպես մեղադրյալ, ճանաչված չէ սնանկ,

3) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,

4) հիմնավորումներ և (կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և (կամ) վերլուծությունները պետք է հնարավորություն

տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարների՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը»,

32) Կանոնակարգի 186-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«186.Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 184-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին»,

33) Կանոնակարգի 186.1-ին և 187-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

34) Կանոնակարգի 188-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«188.Ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ: Ընդ որում, ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է որակավորման վկայական ունեցող՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

35) Կանոնակարգի 189-րդ, 190-րդ, 191-րդ, 192-րդ, 193-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

36) Կանոնակարգի 195-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«195. Սույն կանոնակարգի 184-րդ կետով սահմանված ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել, եթե առկա է Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը անձին հարցազրույցի չհրավիրելու անհրաժեշտության վերաբերյալ:»,

37) Կանոնակարգի 196-րդ և 197-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

38) Կանոնակարգի 198-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«198. Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ գրանցման ենթակա չէ, և բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունները տեղի ունենալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը:»,

39) Կանոնակարգի 199-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«199.Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,

2) անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույց» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,

3) անձը չի համապատասխանում օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի նկատմամբ սահմանված պահանջներին,

4) անձը փոխկապակցված է տվյալ բանկի ղեկավարների հետ (միայն ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի թեկնածուի համար): Փոխկապակցվածությունը դիտարկվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի:»,

40) Կանոնակարգի 200-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«200.Բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ բանկում, օտարերկրյա բանկի մասնաճյուղում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը: Ընդ որում,

բանկի խորհրդի անդամը 5 տարի անընդմեջ բանկում տվյալ պաշտոնում պաշտոնավարելու դեպքում հրավիրվում է Կենտրոնական բանկ հարցազրույցի՝ մասնագիտական համապատասխանության գնահատման նպատակով: Կենտրոնական բանկը հարցազրույցի արդյունքներով կարող է որոշում կայացնել խորհրդի անդամին հանել գրանցումից, եթե վերջինս չի համարվում տվյալ պաշտոնին համապատասխան:»,

41) Կանոնակարգի 201-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«201.Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից՝

1) եթե բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը դիմել է համապատասխան միջնորդությամբ,

2) բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից,

3) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,

4) եթե անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույց» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,

5) եթե ղեկավարը զրկվել է որակավորումից,

6) եթե լրացել է բանկի խորհրդի անդամի պաշտոնավարման 5 տարին և հարցազրույցի հիման վրա՝ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով խորհրդի անդամը չի համապատասխանում տվյալ պաշտոնին:»,

42) Կանոնակարգի 203-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«203.Եթե բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարը հանվել է գրանցումից սույն կանոնակարգի 201-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա, ապա ղեկավարին գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում չի կարող գրանցվել որպես սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.2-րդ ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:»,

43) Կանոնակարգի 205-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«205.Մինչև 90 օր ժամկետով ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անուն, ազգանունը և անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):»,

44) Կանոնակարգի 206-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«206.Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 205-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով բանկին, օտարերկրյա բանկի մասնաճյուղին, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել նշված այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:»,

45) Կանոնակարգի 207-րդ, 208-րդ, 209-րդ, 210-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

46) Կանոնակարգի 212-րդ կետից հանել «և բանկում որոշում կայացնող դիլերների» բառերը,

47) Կանոնակարգի 228-րդ կետում՝

ա) 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) օտարերկրյա բանկի ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի:»,

բ) 6-րդ ենթակետի «ա» պարբերությունը ճանաչել ուժը կորցրած,

գ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով.

«7) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված 45-ի:»,

48) Կանոնակարգի 229-րդ կետից հանել «(կամ) Հավելված 42-ում անձնական տվյալների վերաբերյալ» բառերը,

49) Կանոնակարգը 229-րդ կետից հետո լրացնել 229.1-ին կետով.

«229.1. Բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը յուրաքանչյուր տարի՝ վճարումն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում բանկի մասնաճյուղի գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը կամ բանկի, օտարերկրյա բանկի ներկայացուցչության գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է տուրքի վճարում:»,

50) Կանոնակարգի 235-րդ և 236-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

51) Հավելված 10-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

52) Հավելված 11-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի,

53) Հավելված 16-ը «Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրում և միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:» նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Հավաստիացնում ենք, որ մասնաճյուղի ղեկավարը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև բանկի կողմից սահմանված որակավորման չափանիշներին:»,

54) Հավելված 20-ում՝

ա. վերնագրում «Ներկայացուցչության» բառը փոխարինել «Մասնաճյուղի և ներկայացուցչության» բառերով,

բ. 1-ին կետը «որի» բառից հետո լրացնել «մասնաճյուղի կամ» բառերով,

գ. «Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն» բառերը փոխարինել «Մասնաճյուղի (ներկայացուցչության) ղեկավարի ստորագրություն» բառերով,

դ. «Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավաստիացնում եմ, որ՝

- սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,
- մասնաճյուղի ղեկավարը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև բանկի կողմից սահմանված որակավորման չափանիշներին, և
- վերոնշյալ անձի ստորագրությունը համապատասխանում է իսկականի հետ:»,

55) Կանոնակարգի Հավելված 27-ի 9.2-րդ կետում՝

ա. հանել ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,» բառերը,

բ. «դրանց» բառը փոխարինել «դրա» բառով,

56) Հավելված 31-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի,

57) Կանոնակարգի Հավելվածներ 33-ը, 34-ը, 35-ը, 36-ը, 37-ը, 38-ը, 39-ը, 42-ը, 43-ը, 44-ը ճանաչել ուժը կորցրած,

58) Կանոնակարգը լրացնել Հավելված 45-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից չորս ամիս հետո, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության, 4-րդ ենթակետի, 5-րդ ենթակետի «բ» պարբերության, 6-րդ ենթակետի «գ» պարբերության, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 47-րդ, 49-րդ, 56-րդ, 58-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը բանկի որակավորված և պաշտոնավարող խորհրդի այն անդամները, որոնք պաշտոնավարել են տվյալ պաշտոնում հինգ և ավելի տարի անընդմեջ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում հրավիրվում են Կենտրոնական բանկ հարցազրույցի՝ մասնագիտական համապատասխանության գնահատման համար:

4. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկի կողմից ղեկավարներին տրված որակավորման վկայականները շարունակում են գործել մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն կազմակերպությունում՝ նույն պաշտոնում:

5. Ղեկավարներին տրված որակավորման վկայականների ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրանալու դեպքում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարի որակավորման չափանիշներին համապատասխանության հավաստիացում: Սույն կետը տարածվում է այն ղեկավարների վրա, որոնք գրանցվել և շարունակում են պաշտոնավարել նույն կազմակերպությունում, նույն պաշտոնում (սույն կետով նշված որակավորման վկայականը պահանջող պաշտոնում) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված ղեկավարները համարվում են գրանցումից հանված:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսվա ընթացքում բանկի ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձը, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը կանոնակարգով սահմանված կարգով պետք է գրանցվի Կենտրոնական բանկում:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

21 դեկտեմբերի 2022 թ., N 214-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 214-Ն որոշման

«ՀԱՎԵԼՎԱԾ 10
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության և թույլտվության
տրամադրման, որակավորման և մասնագիտական
համապատասխանության ստուգման կարգերը»
կանոնակարգ 1-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՂԵԿԱՎԱՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել որպես
(անուն, ազգանուն, հայրանուն)

_____:
(բանկի անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև բանկի կողմից սահմանված որակավորման չափանիշներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Բանկի (օտարերկրյա բանկի մասնաճյուղի)
կառավարման մարմնի իրավասու անձ՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«___» _____ 20 թ.: »:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 214-Ն որոշման

«ՀԱՎԵԼՎԱԾ 11
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության և թույլտվության
տրամադրման, որակավորման և մասնագիտական
համապատասխանության ստուգման կարգերը»
կանոնակարգ 1-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (Այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:) 1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում) 1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն

2. Ղեկավար պաշտոն

2.1 Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում

- o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ),
- o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար)
- o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ
- o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
- o գլխավոր հաշվապահ
- o ներքին աուդիտի ղեկավար
- o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
- o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
- o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
- o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
- o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- o պատասխանատու ակտուար
- o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝

- o արական
- o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝

- o Հաշվառման հասցե
- o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝

- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝

- o Հանրային ծառայությունների համարանիշը
- o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար

- o բջջային
- o այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,

Անուն, ազգանուն, հայրանուն

Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. **Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն**

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարել, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

- Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

- Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. **Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ**
5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)
5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար: o Ոչ, o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)
5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)
5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)
5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես մեղադրյալ : o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ
5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)
5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)
5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ: o Ոչ o Այո, ներկայացնել մանրամասներ
5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ
5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում: o Ոչ, o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
○ Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

○ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն,ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ կապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

○ Ոչ ,
○ Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

○ Ոչ ,
○ Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
○ Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

○ Ոչ,
○ Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

8.Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապակցվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

»:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 214-Ն որոշման

«ՀԱՎԵԼՎԱԾ 31
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության սպուգման կարգերը» կանոնակարգ 1-ի

ԴԻՄՈՒՄ
Ֆիզիկական անձի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____ին

Հարգելի _____

Ես՝ _____, խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____ բանկի կանոնադրական հիմնադրամում
(նշվում է բանկի անվանումը)
_____ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:
(նշվում է ուղղակի կամ անուղղակի)

ՄԱՍ 1.

Լրացվում է բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ հանդիսացող մասնակցի կողմից:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
1. Ֆիզիկական անձի տվյալները
1.1.Անունը,ազգանունը,հայրանունը _____ 1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան ամսաթիվը _____ *օր/ամիս/տարի* 1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի տվյալները _____

1.7. Հանրային ծառայությունների համարանիշը _____

1.8. Բնակության վայրը
- հաշվառման վայր _____
- փաստացի բնակության վայր _____

1.9. Հեռախոսահամար _____

1.10. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը, ազգանունը, հայրանունը	Կրելու ժամանակաշրջանը
_____	_____ *(օր/ամիս/տարի)*
_____	_____ *(օր/ամիս/տարի)*

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեությունը

2.1 Կրթություն, որակավորում

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (--թ.ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Միջազգային որակավորման մակարդակը

2.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում

☐ հայերեն

☐ անգլերեն

☐ ռուսերեն

☐ այլ (նշել լեզուն) _____

2.3 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոն, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

2.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը	Աշխատանքի վայրը, պաշտոնը	Հեռախոսը

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

3.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____
Գումար *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
Գումար *%*

3.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

3.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

4.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2. Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝
Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 4.3 կետը

4.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը _____

գ) Վարկի/փոխառության գումարը _____ դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի

4.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	**Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը**	**Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)**

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ: (Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ:

Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

6.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 28-ը:

6.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը		Գտնվելու (բնակության վայրը)		Փոխկապակցվածության տեսակը

8. Այլ տեղեկատվություն

8.1 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն բանկի նկատմամբ, որի կանոնադրական հիմնադրամում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ և այլն)

8.2. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող որևէ բանկի նկատմամբ 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ. ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ և այլն)

8.3. Արդյո՞ք Դուք պատրաստ եք բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն. ☐ Այո ☐ Ոչ ☐ Այլ

«Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.4. Արդյո՞ք բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված տնտեսական ծրագրում Ձեր կողմից առաջարկվում են որևէ փոփոխություններ. ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.5. Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.6. Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ

8.7. Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.8. Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ ունեք դատարանի կողմից ընդունված վարույթ՝ կամավոր կամ սնանկության հայցի վերաբերյալ: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.9. Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես մեղադրյալ: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.10. Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.11. Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.12. Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.13. Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

8.14. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

9.*Հավաստիացնում եմ, որ*

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվություն կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

բ) բացակայում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնում եմ օրենքով և կանոնակարգերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ

ա) իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին,

բ) սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ տրամադրելով իմ անձնական տվյալները և պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը,

գ) ինչպես նաև Կանոնակարգ 1-ի 18-րդ գլխով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) կանոնակարգով սահմանված ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ ներկայացնել բանկ (բանկի մասնաճյուղ):

Անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____

Ամսաթիվ (օր/ամիս/տարի) _____

ՄԱՍ II

Լրացվում է բանկի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
_____ կողմից

(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի անունը և ազգանունը)

_____ բանկի կանոնադրական կապիտալում

(նշվում է բանկի անվանումը)

_____ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

(նշվում է ուղղակի կամ անուղղակի)

2. Հավաստիացնում ենք, որ _____ բանկի կանոնադրական

(նշվում է բանկի անվանումը)

կապիտալում բանկի մասնակցի՝ բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:

(*Սույն կետը չի լրացվում բանկի մասնակցի բաժնեմասը նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)*

Բանկի կառավարման մարմնի իրավասու անձի
անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____

_____

(օր,ամիս,տարի)

»:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 214-Ն որոշման

«Հավելված 45
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության և թույլտվության
տրամադրման, որակավորման և մասնագիտական
համապատասխանության սպուգման կարգերը»
կանոնակարգ 1-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

(բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի անվանումը)

իրական շահառուի վերաբերյալ

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Քաղաքացիություն
3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4. Անձը հաստատող փաստաթղթի տվյալները o Անձնագրի տվյալները o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
5. Նշեք o Հանրային ծառայությունների համարանիշ / Հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը o Կիրառելի չէ
6. Նշեք o Հաշվառման վայր o Փաստացի բնակության վայր
7. Կապի միջոցները o Նշեք հեռախոսահամար ✓ բջջային ✓ այլ o Էլեկտրոնային փոստի հասցե
8. Իրական շահառու դառնալու ամսաթիվը (օր/ամիս/տարի)
9. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (ներկայացնել մանրամասներ, սույն կետի 1-ից 4 ենթակետերի լրացման դեպքում նշել նաև մասնակցության չափը): Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում. o 1) ուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ o 2) անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ o 3) ուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, կամ o 4) անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում, կամ

- 5) տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
- 6) հանդիսանում է տվյալ բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

10. Միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ (միջանկյալ իրավաբանական անձը բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ է).
    - իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները,
    - իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը:

11. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

12. Սույնով հավաստիացնում ենք, որ տեղեկացված ենք և միաժամանակ տեղեկացրել ենք սույն հավելվածով իրական շահառու հանդիսացող անձին առ այն, որ
    - սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
    - տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
    - հայտարարագրով ներկայացված տվյալները՝ այդ թվում անձնական, Կենտրոնական բանկի կողմից կարող են փոխանցվել կամ բացահայտվել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին,
    - ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում բանկը (օտարերկրյա բանկի մասնաճյուղը) կտեղեկացնի Կենտրոնական բանկին:

Կառավարման իրավասու մարմին՝ _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի ներքին հսկողության համակարգին ներկայացվող պահանջներում ներառել ղեկավարների համապատասխանության գնահատմանը, մասնագիտական գիտելիքի ստուգմանը, որակավորմանը ներկայացվող պահանջները, հնարավորություն տալ բանկերին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել բանկերի շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի ««Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի Բաժին 3-ում «ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» բառերից հետո լրացնել «, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ», իսկ Գլուխ 3-ում «անձնակազմի կառավարում» բառերից հետո լրացնել «, ղեկավարների որակավորում և համապատասխանության գնահատում» բառերը,
2) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին կետով.

«20.1.Ներքին հսկողության համակարգը ղեկավարների մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգի առումով նվազագույնը նախատեսում է.

1) ղեկավարների մասնագիտական համապատասխանության գնահատման կարգը, ընթացակարգերը,
2) ղեկավարների «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պահանջների ստուգման ընթացակարգերը,
3) ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, որակավոր-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

ման գործընթացը, գնահատման սկզբունքները և գործընթացը, ընթացակարգերը, պատվիրակման դեպքում՝ որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը,

4) ղեկավարների որակավորման համապատասխանության ստուգման շարունակական ընթացակարգը,
5) Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, դրանց նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 215-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստել ղեկավարների որակավորման մասնագիտացված գործառույթի զարգացմանը և կայացման խթանների ստեղծմանը, համապատասխանեցնել ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման մոտեցումները վերահսկողության միջազգային սկզբունքներին, հնարավորություն տալ ֆինանսական կազմակերպություններին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում, ներդնել ֆինանսական կազմակերպություններում ղեկավարների փոխարինելիության ճկուն մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել արդյունավետ ընթացակարգ՝ վարկային կազմակերպությունների իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 10-րդ հոդվածի 3-րդ մասը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 13-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Սույն կանոնակարգը սահմանում է.

1) Վարկային կազմակերպությունների պետական գրանցման ու լիցենզավորման կարգը,

2) Վարկային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման կարգը,

3) Վարկային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման համար Կենտրոնական բանկի կողմից համաձայնություն ստանալու կարգը,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

4) Վարկային կազմակերպությունների տիպի (խմբի) փոփոխման գրանցումը,
5) Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը,
6) Վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման կարգը,
7) Գրանցման վկայականի և վարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի կորստի, ոչնչացման և օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում կրկնօրինակի ստացման կարգը,
8) Վարկային կազմակերպության լուծարման դեպքում լիցենզիան Կենտրոնական բանկ վերադարձնելու կարգը,
9) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների, պետության և ֆիզիկական անձանց կողմից նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու կարգը,
10) Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման հետ կապված այլ դրույթները,
11) Ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման կարգը,
12) Գրանցման ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
13) Գրանցման ոչ ենթակա փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը,
14) Վարկային կազմակերպության տարածքից դուրս ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը,
15) Վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության մասնաճյուղի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները:»,

2) Կանոնակարգը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-21.2-րդ կետերով՝

«21.1. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել վարկային կազմակերպությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ վարկային կազմակերպության գրանցված վերստուգիչ հանձնաժողովի անդամների), ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

21.2. Վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամի ժամանակավոր պաշտոնակատար չեն կարող լինել վարկային կազմակերպությունում այլ պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:»,

3) Կանոնակարգի 22-րդ կետում.

ա) 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Ղեկավար»՝ Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավարներ, մասնավորապես վարկային կազմակերպության խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահ, նրա տեղակալ և խորհրդի անդամներ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, նրա տեղակալ, վարչության անդամներ, գլխավոր հաշվապահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:»,

բ) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Ֆինանսական վիճակի վատթարացման առկայություն կամ հնարավորություն»՝ այնպիսի իրավիճակ, երբ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված վարկային կազմակերպության գործու-

նության ամփոփ գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից:»,

գ) 13-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած,

դ) 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) «Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»՝ անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները, և որի վրա տարածվում են «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, բացառությամբ՝ 2-րդ մասի «դ» կետի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,»,

ե) 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) «Մասնագիտական համապատասխանության չափանիշներ»՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,»,

զ) 15-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-17-րդ ենթակետերով.

«16) «Որակավորման չափանիշներ»՝ վարկային կազմակերպության ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ,»,

17) «Որակավորող կազմակերպություն»՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող՝ վարկային կազմակերպության կողմից ընտրված կազմակերպություն:»,

4) Կանոնակարգի 23-րդ կետի 1-ին ենթակետը «դ.» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ.1.» պարբերությամբ.

«դ.1.Ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, քրեական գործով ներգրավված չէ որպես մեղադրյալ, ճանաչված չէ սնանկ,»,

5) Կանոնակարգի 25-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

6) Կանոնակարգի 29-րդ կետի 6-րդ ենթակետում «անդորրագիրը,» բառից հետո լրացնել «մասնաճյուղի գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը, եթե օրենսդրությամբ նախատեսված է տուրքի վճարում:» բառերը,

7) Կանոնակարգի 47-րդ կետի 6-րդ ենթակետում «132-րդ կետով» բառերը փոխարինել «130-րդ կետով» բառերով,

8) Կանոնակարգի 65-րդ կետի 1-ին ենթակետը «Հավելված 22-ի» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» բառերը:

9) Կանոնակարգը 12-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 12.1. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

68.1. Վարկային կազմակերպությունը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված չափանիշներով իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ վարկային կազմակերպության իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

68.2. Սույն կանոնակարգի 68.1-ին կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար վարկային կազմակերպությունը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել վարկային կազմակերպության իրական շահառու:

68.3. Սույն կանոնակարգի 68.2 կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում վարկային կազմակերպությունը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև վարկային կազմակերպության մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել վարկային կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Վարկային կազմակերպությանը արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

68.4. Վարկային կազմակերպությունը պարտավոր է իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացնել հայտարարագիր՝ համաձայն Հավելված 30-ի:

68.5. Սույն կանոնակարգի 68.4-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ վարկային կազմակերպության իրական շահառու համարվելու մասին վարկային կազմակերպության տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

68.6. Անկախ սույն կանոնակարգի 68.5-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը վարկային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2) փոփոխված տեղեկություններ վարկային կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ:»,

10) Կանոնակարգի 4-րդ բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԲԱԺԻՆ IV. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

11) Կանոնակարգի 13-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 13. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

69. Ղեկավարները պետք է բավարարեն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ունենան վարկային կազմակերպության կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:

70. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է վարկային կազմակերպությունը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Վար-

կային կազմակերպությունը պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն՝

1. ղեկավարների որակավորման չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը,
2. ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

70.1. Վարկային կազմակերպությունը ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

70.2. Որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում վարկային կազմակերպությունը իր կողմից հաստատված ներքին կանոնակարգով պետք է սահմանի որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը:

71. Նոր ստեղծվող վարկային կազմակերպության ղեկավարների որակավորման չափանիշների համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կողմից կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:

72. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար համարվող անձանց որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է վարկային կազմակերպության ներքին կանոնակարգերի համաձայն՝ ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

73. Վարկային կազմակերպության խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ խորհրդի կազմը պետք է ապահովի խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձառության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքի կիրառելիությունը:

73.1. Կենտրոնական բանկը կարող է վարկային կազմակերպությունների ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կազմակերպության կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում:»,

12) Կանոնակարգի գլուխներ 14-ը, 15-ը, 16-ը, 17-ը, 18-ը, 19-ը, 20-ը ճանաչել ուժը կորցրած,

13) Կանոնակարգի 124-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«124.Վարկային կազմակերպության ղեկավարը պետք է.

1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,
2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի կազմակերպության գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:»,

14) Կանոնակարգի 125-րդ, 126-րդ, 127-րդ, 128-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

15) Կանոնակարգի գլուխ 22-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 22. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ»,

16) Կանոնակարգի 129-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«129) Կենտրոնական բանկում գրանցվում են միայն սույն կանոնակարգով ղեկավար համարվող անձանց կազմում կատարված փոփոխությունները:»,

17) Կանոնակարգի 130-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«130. Ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 140-րդ կետով սահմանված դեպքերի:»,

18) Կանոնակարգի 131-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«131.Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 3-ի,

2) ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 4-ի, ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում նաև՝ այն երկրի, որի ռեզիդենտն է հանդիսանում գրանցվող ղեկավարը, համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, քրեական գործով ներգրավված չէ որպես մեղադրյալ, ճանաչված չէ սնանկ,

3) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,

4) հիմնավորումներ և (կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և (կամ) վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարների՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը:»,

19) Կանոնակարգի 132-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«132. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 130-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:»,

20) Կանոնակարգի 133-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«133.Ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ: Ընդ որում, ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է որակավորման վկայական ունեցող՝ համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

21) Կանոնակարգի 134-րդ, 135-րդ, 136-րդ, 137-րդ, 138-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

22) Կանոնակարգի 140-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«140. Սույն կանոնակարգի 130-րդ կետով սահմանված ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել, եթե առկա է Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքը անձին հարցազրույցի չհրավիրելու անհրաժեշտության վերաբերյալ:»,

23) Կանոնակարգի 142-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

24) Կանոնակարգի 143-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«143. Վարկային կազմակերպության խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ գրանցման ենթակա չէ, և վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ կամ խորհրդի նախագահի տեղակալ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունները տեղի ունենալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը»,

25) Կանոնակարգի 144-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«144. Անձի՝ որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) անձի կողմից ներկայացվել են թերի, անարժանահավատ փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,

2) անձը չի համապատասխանում օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի նկատմամբ սահմանված պահանջներին:»,

26) Կանոնակարգի 145-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«145. Վարկային կազմակերպությունների ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ վարկային կազմակերպությունում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:»,

27) Կանոնակարգի 146-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«146. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից.

1) եթե վարկային կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,

2) վարկային կազմակերպության լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից,

3) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,

4) եթե ղեկավարը զրկվել է որակավորումից:»,

28) Կանոնակարգի 148-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«148. Եթե վարկային կազմակերպության ղեկավարը հանվել է գրանցումից սույն կանոնակարգի 146-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա ղեկավարին գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում չի կարող գրանցվել որպես սույն կանոնակարգի Հավելված 4-ի 1.2-ին ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:»,

29) Կանոնակարգի 150-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«150. Մինչև 90 օր ժամկետայնությամբ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում վարկային կազմակերպությունը նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):»,

30) Կանոնակարգի 151-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«151. Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 150-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով վարկային

կազմակերպությանը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես վարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում վարկային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:»,

31) Կանոնակարգի 152-րդ, 153-րդ, 154-րդ, 155-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

32) Կանոնակարգի 173-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով.

«5) վարկային կազմակերպության իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Հավելված 30-ի:»,

33) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակության 175.1-ին կետով.

«175.1. Վարկային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի՝ վճարումն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում վարկային կազմակերպության մասնաճյուղի (գլխամասի) գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը:»,

34) Կանոնակարգի 177-րդ և 178-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

35) Կանոնակարգի Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

36) Կանոնակարգի Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի,

37) Կանոնակարգի Հավելված 18-ի 9.2-րդ կետում՝

ա) հանել ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,» բառերը,

բ) «դրանց» բառը փոխարինել «դրա» բառով,

38) Կանոնակարգի Հավելված 22-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի,

39) Կանոնակարգի Հավելվածներ 23-ը, 24-ը, 25-ը, 26-ը, 27-ը, 28-ը ճանաչել ուժը կորցրած,

40) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 30-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 32-րդ, 33-րդ, 40-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկի կողմից ղեկավարներին տրված որակավորման վկայականները շարունակում են գործել մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն վարկային կազմակերպությունում նույն պաշտոնում:

4. Ղեկավարներին տրված որակավորման վկայականների ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրանալու դեպքում վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարի որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում: Սույն կետը տարածվում է այն ղեկավարների վրա, որոնք գրանցվել և շարունակում են պաշտոնավարել նույն կազմակերպությունում նույն պաշտոնում

(սույն կետով նշված որակավորման վկայականը պահանջող պաշտոնում) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված ղեկավարները համարվում են գրանցումից հանված:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 216-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստել ղեկավարների որակավորման մասնագիտացված գործառույթի զարգացմանը և կայացման խթանների ստեղծմանը, համապատասխանեցնել ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման մոտեցումները վերահսկողության միջազգային սկզբունքներին, հնարավորություն տալ ֆինանսական կազմակերպություններին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում, ներդնել ֆինանսական կազմակերպություններում ղեկավարների փոխարինելիության ճկուն մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել արդյունավետ ընթացակարգ՝ ապահովագրական ընկերությունների իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը, 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 22-րդ հոդվածը, 51-րդ հոդվածի 4-րդ մասը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի ««Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 1-ին կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) ղեկավարների, պատասխանատու անձանց որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման կարգը,»,

2) Կանոնակարգը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-րդ կետով.

«21.1 Ապահովագրական ընկերության մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ՝ գլխամասի և մասնաճյուղի միջև իրական ժամանակի ռեժիմով (մասնաճյուղում կատարվող գործարք-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

ներն ակնթարթային արտացոլվում են տեղեկատվական բազայում և ապահովագրական ընկերության հաշվեկշռում) գործունեություն ծավալելու համար կապի առկայության դեպքում:»,

3) Կանոնակարգի 22-րդ կետում.

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «ղեկավար»՝ Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավարներ, մասնավորապես՝ ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, տնօրինության ղեկավարը և անդամները, վարչության նախագահը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ղեկավարը, ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձը, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը, պատասխանատու ակտուար, ապահովագրական բրոքերի գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, վարչության անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» հաստատելու մասին» թիվ 146-Ն որոշմամբ ղեկավար ճանաչված անձինք,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար»՝ անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները և որի վրա տարածվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, բացառությամբ 1-ին մասի 1-ին կետի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,»,

գ. 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) «մասնագիտական համապատասխանության չափանիշներ»՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,

դ. 12-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) «որակավորման չափանիշներ»՝ ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ,»,

ե. 12-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ ենթակետ.

13) «որակավորող կազմակերպություն»՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող՝ ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի կողմից ընտրված կազմակերպություն:»,

4) Կանոնակարգի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24. Սույն կանոնակարգի իմաստով՝ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում է համարվում, երբ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված ապահովագրական ընկերության գործունեության ամփոփ գնահատականը վատթարացել է կամ կարող է վատթարանալ սահմանված չափից:»,

5) Կանոնակարգի 25-րդ կետի 1-ին ենթակետը «գ.» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1.» պարբերությամբ.

«գ1. Ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում

առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, նրա նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում, ճանաչված չէ սնանկ,»,

6) Կանոնակարգի 34-րդ կետի 1-ին ենթակետը «դ.» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ1.» պարբերությամբ.

«դ1. Ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, նրա նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում, ճանաչված չէ սնանկ,»,

7) Կանոնակարգի 48-րդ կետի.

ա. 1-ին ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,»,

բ. 3-րդ ենթակետում «անդորրագիրը,» բառից հետո լրացնել «մասնաճյուղի գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը,» բառերը,

8) Կանոնակարգի 50-րդ կետի

ա. 3-րդ ենթակետում «անդորրագիրը,» բառից հետո լրացնել «ներկայացուցչության գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը,» բառերը,

բ. 4-րդ և 5-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,

9) Կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,»,

10) Կանոնակարգի 53-րդ կետի 5-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել,

11) Կանոնակարգի 94-րդ կետի 1-ին ենթակետում «Հավելված 22-ի,» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» բառերը,

12) Կանոնակարգի 99-րդ կետի 1-ին ենթակետում «Հավելված 22-ի,» բառերից հետո լրացնել «ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» բառերը,

13) Կանոնակարգը 16-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-րդ գլխով.

«**ԳԼՈՒԽ 16.1**

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

105.1 Ապահովագրական ընկերությունը կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղը (այս գլխում այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների՝ «Փո-

ղերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով ապահովագրական ընկերության իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ ապահովագրական ընկերության իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

105.2 Սույն կանոնակարգի 105.1-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար ապահովագրական ընկերությունը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել ապահովագրական ընկերության իրական շահառու:

105.3 Սույն կանոնակարգի 105. 2-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև ապահովագրական ընկերության մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել ապահովագրական ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Ապահովագրական ընկերությանը արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

105.4 Ապահովագրական ընկերությունը պարտավոր է իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացնել հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 44-ի:

105.5 Սույն կանոնակարգի 105.4-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ ապահովագրական ընկերության իրական շահառու համարվելու մասին ապահովագրական ընկերության տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

105.6 Անկախ սույն կանոնակարգի 105. 5-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը ապահովագրական ընկերությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
2) փոփոխված տեղեկություններ ապահովագրական ընկերության իրական շահառուների վերաբերյալ:»,

14) Կանոնակարգի 5-րդ բաժնի վերնագրից հանել «ՍՏՈՒԳՄԱՆ» բառը,

15) Կանոնակարգի գլուխ 18-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 18

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

114. Ղեկավարները պետք է բավարարեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, 90-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ունենան ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկե-

րության մասնաճյուղի (սույն բաժնում այսուհետ՝ ապահովագրական ընկերություն), ապահովագրական բրոքերի կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:

115. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում՝ որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը, ինչպես նաև ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

116. Ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

117. Սույն կանոնակարգով սահմանված ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի որակավորման և մասնագիտական չափանիշների համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկում գրանցման պահանջներն ու ընթացակարգերը տարածվում են համապատասխանաբար Բյուրոյի գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ղեկավարի, գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի վրա:

118. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարի մասնագիտական և որակավորման համապատասխանության չափանիշները և Կենտրոնական բանկում գրանցման պահանջները և ընթացակարգերը տարածվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» հաստատելու մասին» թիվ 146-Ն որոշմամբ ղեկավար ճանաչված անձի վրա:

119. Նոր ստեղծվող ապահովագրական ընկերության ղեկավարների որակավորման չափանիշների համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կողմից կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:

120. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար համարվող անձանց որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի ներքին կանոնակարգերի համաձայն՝ ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

120.1 Ապահովագրական ընկերության խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ խորհրդի կազմը պետք է ապահովի խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձա-

ռության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքի կիրառելիությունը:

120.2 Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ընկերության կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում»,

16) Կանոնակարգի 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ գլուխներն ուժը կորցրած ճանաչել,

17) Կանոնակարգի 169-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«169. Ապահովագրական ընկերության կամ ապահովագրական բրոքերի ղեկավարը պետք է.

1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,

2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի ընկերության գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար,

18) Կանոնակարգի 170-րդ, 171-րդ, 172-րդ, 173-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,

19) Կանոնակարգի գլուխ 27-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 27

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ»,

20) Կանոնակարգի 174-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«174. Կենտրոնական բանկում գրանցվում են միայն սույն կանոնակարգով ղեկավար համարվող անձանց կազմում կատարված փոփոխությունները:»,

21) Կանոնակարգի 175-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«175. Ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 186-րդ կետով սահմանված դեպքերի:»,

22) Կանոնակարգի 176-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«176. Անձի որպես ղեկավարի գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ապահովագրական ընկերությունը, ինչպես նաև ապահովագրական բրոքերային ընկերությունը Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձի որպես ղեկավարի գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի,

2) ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի, ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում նաև՝ այն երկրի, որի ռեզիդենտն է հանդիսանում գրանցվող ղեկավարը, համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, նրա նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում, ճանաչված չէ սնանկ,

3) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,

4) հիմնավորումներ և (կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և (կամ) վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարների՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը»,

23) Կանոնակարգի 177-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«177. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 175-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:»,

24) Կանոնակարգի 178-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«178. Ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ: Ընդ որում, ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է որակավորման վկայական ունեցող՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

25) Կանոնակարգի 179-րդ, 180-րդ, 181-րդ, 182-րդ, 183-րդ, 184-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

26) Կանոնակարգի 186-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«186. Սույն կանոնակարգի 175-րդ կետով սահմանված ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:»,

27) Կանոնակարգի 187-րդ և 188-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

28) Կանոնակարգի 189-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«189. Ապահովագրական ընկերության խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ գրանցման ենթակա չէ: Ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը:»,

29) Կանոնակարգի 190-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«190. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,

2) անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույց» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն և հիման վրա չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,

3) անձը չի համապատասխանում օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի նկատմամբ սահմանված պահանջներին:»,

30) Կանոնակարգի 191-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«191. Ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ ապահովագրական ընկերությունում, ապահովագրական

բրոքերում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:»,

31) Կանոնակարգի 192-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«192. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից.

1) եթե ապահովագրական ընկերությունը, ապահովագրական բրոքերը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
2) ապահովագրական ընկերության լուծարային հանձնաժողովի նախագահի նշանակման պահից,
3) եթե խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
4) եթե անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույցը» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
5) եթե ղեկավարը զրկվել է որակավորումից:»,

32) Կանոնակարգի 193-րդ կետից հանել «օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի» բառերը,

33) Կանոնակարգի 194-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«194. Եթե ապահովագրական ընկերության, ապահովագրական բրոքերի ղեկավարը հանվել է գրանցումից համաձայն սույն կանոնակարգի 192-րդ կետի 5-րդ ենթակետի, ապա ղեկավարին գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում չի կարող գրանցվել որպես սույն կանոնակարգի Հավելված 17-ի 1.2-րդ ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:»,

34) Կանոնակարգի 196-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«196. Մինչև 90 օր ժամկետով ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում ապահովագրական ընկերությունը (ապահովագրական բրոքերը) նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը և անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):»,

35) Կանոնակարգի 197-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«197. Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 196-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ապահովագրական ընկերությանը (ապահովագրական բրոքերին), եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես ապահովագրական ընկերության (ապահովագրական բրոքերի) ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում ապահովագրական ընկերությունը (ապահովագրական բրոքերը) պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:»,

36) Կանոնակարգի 198-րդ, 199-րդ, 200-րդ, 201-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

37) Կանոնակարգի 218-րդ կետում.

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ մասնաճյուղի, ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,»,

բ. 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետ.

«7) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ փոփոխությունները տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 44-ի:»,

38) Կանոնակարգը 220-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 220.1-րդ կետով.

«220.1 Ապահովագրական ընկերությունը յուրաքանչյուր տարի՝ վճարումն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում ապահովագրական ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության համար տարեկան տուրքի անդորրագիրը:»,

39) Կանոնակարգի 229-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ1.» պարբերությամբ.

«բ1. Ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, նրա նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում,»,

40) Կանոնակարգի 247-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«247. Ապահովագրական ընկերությունը սույն կանոնակարգի 244-րդ և 245-րդ կետերով սահմանված փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալու պահից՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում ապահովագրական գործակալին ընկերության ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու մասին, եթե բացակայում են ապահովագրական գործակալին ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառումը մերժելու վերաբերյալ հիմքերը:»,

41) Կանոնակարգը 250-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 250.1-րդ կետով.

«250.1 Կենտրոնական բանկն ապահովագրական գործակալին կարող է հանել ապահովագրական գործակալների ռեգիստրից առանց ապահովագրական ընկերության միջնորդության, եթե ի հայտ են եկել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 106-րդ հոդվածով սահմանված հիմքերը: Սույն կետով սահմանված կարգով ապահովագրական գործակալին ապահովագրական ռեգիստրից հանելու դեպքում Կենտրոնական բանկը պարտավոր է ռեգիստրից հանելու պահից եռօրյա ժամկետում այդ մասին ծանուցել ապահովագրական գործակալին և այն ապահովագրական ընկերություններին, որոնց գործակալն է հանդիսանում տվյալ անձը:»,

42) Կանոնակարգի Հավելվածներ 15-ը, 18-ը, 19-ը, 33-ը, 34-ը, 38-ը ուժը կորցրած ճանաչել,

43) Հավելված 16-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

44) Հավելված 17-ը շարադրել նոր խմբագրությամբ ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի,

45) Հավելված 22-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի,

46) Հավելված 20-ի

ա. վերնագրում «Ներկայացուցչության» բառը փոխարինել «Մասնաճյուղի և ներկայացուցչության» բառերով,

բ. 1-ին կետը «որի» բառից հետո լրացնել «մասնաճյուղի կամ» բառերով,

գ. «Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն» բառերը փոխարինել «Մասնաճյուղի (ներկայացուցչության) ղեկավարի ստորագրություն» բառերով,

դ. «Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավաստիացնում եմ, որ

- սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական, մասնաճյուղի ղեկավարը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև ապահովագրական ընկերության կողմից սահմանված որակավորման չափանիշներին:»,

47) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 43-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

48) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 44-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 5-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո, բացառությամբ սույն որոշման 1-ին կետին 4-րդ, 5-րդ, 6-րդ ենթակետերը, 7-րդ ենթակետի «բ» պարբերությունը, 8-րդ ենթակետի «ա» պարբերությունը, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 37-րդ ենթակետի «բ» պարբերությունը, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ և 48-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկի կողմից ղեկավարներին տրված որակավորման վկայականները շարունակում են գործել մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն կազմակերպությունում նույն պաշտոնում:

4. Ղեկավարներին տրված որակավորման վկայականների ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրանալու դեպքում, կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարի որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում: Սույն կետը տարածվում է այն ղեկավարների վրա, որոնք գրանցվել և շարունակում են պաշտոնավարել նույն կազմակերպությունում նույն պաշտոնում (սույն կետով նշված որակավորման վկայականը պահանջող պաշտոնում) մինչև սույն որոշումը ուժի մեջ մտնելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված ղեկավարները համարվում են գրանցումից հանված:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսվա ընթացքում ապահովագրական ընկերության ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձը, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պետք է գրանցվեն Կենտրոնական բանկում կանոնակարգով սահմանված կարգով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 217-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 217-Ն որոշման

«Հավելված 16
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության,
թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության
ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____ին

Հարգելի ----------

Խնդրում ենք _____ գրանցել
(անուն, ազգանուն, հայրանուն)

որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև ապահովագրական ընկերության (ապահովագրական բրոքերի) կողմից սահմանված որակավորման չափանիշներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Ապահովագրական ընկերության
(ապահովագրական բրոքերի) կառավարման
իրավասու մարմին՝ _____
/անուն, ազգանուն, ստորագրություն/

«_____» _____ 20___թ.:

»:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 217-Ն որոշման

«Հավելված 17
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության
ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար,

- o գործադիր մարմնի ղեկավար)
- o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ
- o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
- o գլխավոր հաշվապահ
- o ներքին աուդիտի ղեկավար
- o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
- o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
- o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
- o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
- o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
- o պատասխանատու ակտուար
- o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝

- o արական
- o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝

- o Հաշվառման հասցե
- o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝

- o Անձնագրի տվյալները
- o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝

- o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
- o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար

- o բջջային
- o այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,

- o Անուն, ազգանուն, հայրանուն
- o Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

- o հայերեն
- o անգլերեն
- o ռուսերեն
- o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և դուրսգրման ամսաթվերը	Կազմակերպության ամբողջական անվանումը	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշանակում կատարելիս, եթե այդ մասին տրվել է հրաման, ապա՝ հրամանի համարը և ամսաթիվը

4.5 Նշեք

- o Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ,

o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

○ այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	**Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)**	**Մասնակցության չափը (%),**	**Բաժնետոմսերի քանակը**	**Ընդհանուր գումարը (դրամով)**

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

○ այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
○ Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝
○ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն,ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

○ Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

○ Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

»:

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
Խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 217-Ն որոշման

«Հավելված 22
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության
ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը

Դիմում
Ֆիզիկական անձի կողմից ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
_____ին

Հարգելի _____

Ես՝ , խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____
(նշվում է ապահովագրական ընկերության անվանումը)
Ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.

Լրացվում է ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ-ուղղակի (անուղղակի) մասնակցի կողմից

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
1. Ֆիզիկական անձի տվյալներ
1.1 Անուն, ազգանուն, հայրանուն
1.2 Սեռ՝ o արական o իգական
1.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
1.4 Ծննդավայր
1.5 Քաղաքացիություն

1.6 Անձնագրի տվյալներ

1.7 Հանրային ծառայությունների համարանիշ

1.8 Բնակության վայրը՝

Հաշվառման հասցե՝

Փաստացի բնակության վայրի հասցե՝

1.9 Հեռախոսահամար

1.10 Էլեկտրոնային փոստի հասցե

1.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները,ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,

Անուն, ազգանուն, հայրանուն Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

2.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը կամ միջազգային որակավորման մակարդակը

2.2 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն

o անգլերեն

o ռուսերեն

o այլ (նշել լեզուն)

2.3 Վերջին 10 տարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները.(ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ամիսներն ու տարեթվերը	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության տեսակը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարվե՞ց, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չէն

2.4 Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (բաժնեմաս)

3.1 Բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թիվը _____ գումար _____ %
այդ թվում՝ ձայնի իրավունք տվող ---------- գումար _____%

3.2 Յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) ձեռքբերման գինը _____

3.3 Բաժնետոմսի (բաժնեմասի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու):

4.1 Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2 Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝
Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 4.3 կետը:

4.3 Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝
ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____
բ) Գտնվելու/բնակության վայրը _____
գ) Վարկի/փոխառության գումարը _____
դ) Գրավի առարկան _____
ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները _____
զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի _____

4.4 Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի մասնակցության չափը (%)

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ:

(Կենտրոնական բանկը կարող է պահանջել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցությունների վերաբերյալ.

6.1 Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 25-ը:

6.2 Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ.

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն:

Կազմակերպության անվանումը/անձի անուն, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը	Գտնվելու/բնակության վայրը	Փոխկապակցվածության տեսակը

8. Այլ տեղեկատվություն.

8.1 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ.

o Այո (ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)

o Ոչ

8.2 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.3 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ,

o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

8.4 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.5 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ ունեք դատարանի կողմից ընդունված վարույթ՝ կամավոր կամ սնանկության հայցի վերաբերյալ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.6 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.7 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.8 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.9 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.10 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում (սույն միջնորդագրի 1. 2 կետում սահմանված կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություն(ներ))) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.11 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

8.12 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ապահովագրական ընկերության նկատմամբ, որի կանոնադրական կապիտալում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

o Ոչ

o Այո (ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)

8.13 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

8.14 Արդյո՞ք Դուք պատրաստ եք ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն.

o Ոչ,

o Այո, (ներկայացնել մանրամասներ)

8.15 Արդյո՞ք ապահովագրական ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում Ձեր կողմից առաջարկվում են որևէ փոփոխություններ.

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.16 Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

9. Հավաստիացնում եմ, որ

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

բ) բացակայում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ ապահովագրական ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնում եմ օրենքով և կանոնակարգերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ

ա) իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին,

բ) սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ տրամադրելով իմ անձնական տվյալները և պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Անուն, ազգանուն _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

»:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 217-Ն որոշման

«Հավելված 43
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման,
համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական
համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց

1. Սույն ուղեցույցը սահմանում է ապահովագրական ընկերության խորհրդի, խորհրդի անդամների լիազորությունների, իրավասությունների և պարտականությունների նվազագույն շրջանակը:

2. Ապահովագրական ընկերության խորհուրդը իրականացնում է ապահովագրական ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը: Ապահովագրական ընկերության խորհուրդը որոշում է ապահովագրական ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, հաստատում է ընկերության հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերը, վերահսկում է գործադիր մարմնի գործունեությունը և հաշվետու է ապահովագրական ընկերության բաժնետերերին:

1. Խորհրդի անդամների գործնական որակները և բիզնես վարքը

3. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է հավասարակշռող դեր ստանձնի ապահովագրական ընկերության և ապահովագրական ընկերության բաժնետերերի միջև, լինի բարեխիղճ և լիովին իրազեկ, որոշումների ընդունման ժամանակ կիրառի անկախ և խելամիտ դատողություն:

1) Որոշումներ ընդունելիս խորհրդի անդամի կողմից անկախ դատողության կիրառումը նշանակում է, որ նա դրսևորում է անկողմնակալություն և անաչառ է խնդրահարույց ու շահերի բախում առաջացնող իրավիճակներում: Օրինակ՝ հաշվի է առնում բաժնետերերի փոքրամասնության շահերը, օբյեկտիվորեն է գնահատում խորհրդի և գործադիր մարմնի կատարողականները, ընդունում արդար որոշում-

ներ գործադիրի և խորհրդի վարձատրության որոշման ժամանակ, ապահովագրական ընկերության վերակազմավորման և այլ դեպքերում:

2) Անկախ որոշումների ընդունման ապահովման նպատակով խորհրդի անդամը չպետք է որևէ տնտեսական, ընտանեկան կամ այլ կապերի միջոցով փոխկապակցված լինի մյուս խորհրդի անդամների և գործադիր մարմնի անդամների հետ: Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել ապահովագրական ընկերության այլ աշխատակից: Խորհրդի անդամը պետք է ամբողջովին տեղյակ լինի ապահովագրական ընկերության ընթացիկ գործունեությանը, ապահովագրական ընկերության հատուկ ռիսկերին, երկարաժամկետ զարգացման ծրագրերին և ապահովագրական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտին, մասնավորապես, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ապահովագրական ընկերության կազմակերպական-իրավական ձևը կարգավորող օրենսդրությանը, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, հարկային օրենսդրությանը, ապահովագրական գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերին, ապահովագրական ընկերության կանոնադրությանը, ապահովագրական ընկերության ընդհանուր ժողովի և խորհրդի հաստատած քաղաքականություններին, կանոնակարգերին և ընթացակարգերին:

4. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է հատկացնի բավարար ժամանակ իր պարտականությունների պատշաճ և արդյունավետ կատարման համար:

- Ապահովագրական ընկերության խորհրդի անդամը պետք է գիտակցի, որ խորհրդի անդամի պաշտոնի համատեղումն այլ գործունեության հետ կարող է բացասաբար անդրադառնալ իր պարտականությունների պատշաճ կատարման, ապահովագրական ընկերության ընդհանուր կառավարման վրա:

5. Յուրաքանչյուր խորհրդի անդամ պետք է մշտապես կատարելագործի իր որակավորումը:

- Պարտականությունները պատշաճ կատարելու, ինչպես նաև խորհրդի գործունեությունը և կատարողականը բարելավելու նպատակով խորհրդի անդամը պետք է մշտապես ընդլայնի և կատարելագործի իր գիտելիքները՝ մասնակցելով վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև ինքնուսուցման միջոցով: Վերջինս վերաբերում է նաև նոր օրենսդրության և կարգավորման պահանջներին ու ապահովագրական ընկերության փոփոխվող իրավիճակին ու ընթացիկ ռիսկերին իրազեկ լինելուն:

2. Խորհրդի առաքելությունը և խորհրդի անդամների՝ օրենքով սահմանված իրավասությունները

6. Ապահովագրական ընկերության խորհրդի առաքելությունն է՝ բաժնետերերի ներդրումային արժեքի առավելագույն ավելացումը (բաժնետոմսերի շուկայական գնի ավելացումը) և ապահովագրական ընկերության այլ շահագրգիռ անձանց շահերի պաշտպանությունը: Դրանից ելնելով՝ խորհուրդն իր գործունեության ընթացքում ներկայացնում, պաշտպանում և ուղղորդվում է բաժնետերերի ու շահագրգիռ անձանց (բոլոր անձինք, որոնք իրենց ներդրումով՝ մարդկային, մասնագիտական, փողային, այլ, աջակցում են ապահովագրական ընկերության երկարաժամկետ առաջընթացին և մրցակցությանը, այդ թվում՝ ապահովագրական ընկերության ներդրողները, աշխատակիցները և այլն) շահերով:

7. Ապահովագրական ընկերության խորհրդի իրավասությունները սահմանվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով:

8. Ապահովագրական ընկերության խորհուրդը բացի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականություններից, ընկերության խորհրդին ներկայացվող հաշվետվություններում օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի և ապահովագրական ընկերության ներքին կարգերի խախտումների բացահայտման դեպքում պարտավոր է նաև ձեռնարկել միջոցներ այդ խախտումները վերացնելու և հետագայում չկրկնելու նպատակով:

3. Տեղեկատվության հասանելիությունը խորհրդի անդամներին: Խորհրդի անդամների կողմից տեղեկատվության բացահայտումը

9. Խորհրդի անդամը իր պարտականությունները պատշաճ կատարելու համար պահանջում է ճշգրիտ, ամբողջական և ժամանակին տեղեկատվություն ապահովագրական ընկերության գործունեության մասին՝ մասնավորապես հաստատելով ապահովագրական ընկերության խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը և պարբերականությունը: Նշված տեղեկատվությունը պետք է լինի բավարար՝ արդյունավետ որոշումների ընդունման շարունակական գործընթացը ապահովելու համար:

10. Խորհրդի անդամն իրազեկ է, որ իրեն վերաբերող հետևյալ տեղեկատվությունը հրապարակվելու է և հասանելի է հասարակությանը.

1) անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը,
2) նախորդող տարվա ընթացքում խորհրդի անդամի և նրա հետ փոխկապակցված անձանց («Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Փոխկապակցված անձինք» հոդված 13–ում սահմանված անձինք) կողմից ապահովագրական ընկերությունից ստացված հատուցումների և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ,
3) ապահովագրական ընկերության նկատմամբ խորհրդի անդամի ունեցած ընդհանուր պարտավորությունները՝ փոխառությունների և այլ գծով:

11. Խորհրդի անդամը իրազեկ է, որ իր՝ նախորդ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունից ստացված ամբողջ վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ապահովագրական ընկերության բոլոր մասնակիցներին:

4. Խորհրդի անդամի աշխատանքային գործընթացի կազմակերպումը, օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները

12. Խորհրդի անդամը մասնակցում է ապահովագրական ընկերության խորհրդի նիստերին: Ապահովագրական ընկերության խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ: Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք)՝ ապահովագրական ընկերության խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ: Ընդ որում, յուրաքանչյուր խորհրդի անդամ խորհրդի արտահերթ նիստ գումարելու իրավունք ունի:

13. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայն, ընդ որում ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի, այդ թվում՝ այլ խորհրդի անդամի, չի թույլատրվում:

14. Խորհրդի անդամը, որը մասնակցել է նիստին, ստորագրում է նիստի արձանագրությունը և օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների

ճշտության և հավաստիության համար: Արձանագրությունում մասնավորապես նշվում են՝ քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած խորհրդի յուրաքանչյուր անդամի, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները:

15. Ապահովագրական ընկերության խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև շուկայի մասնակիցներին՝ իրենց շահերի պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքով ապահովելու նպատակով կարող է ստեղծել խորհրդին կից հանձնաժողովներ: Օրինակ՝ «աուդիտի կոմիտե կամ հանձնաժողով», «ռիսկերի կառավարման հանձնաժողով», «վարձատրման և նշանակման կոմիտե» և այլն: Այդ հանձնաժողովներում կարող են ընդգրկվել ինչպես ապահովագրական ընկերության խորհրդի անդամներ, այնպես էլ ընկերության այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:

5. Խորհրդի անդամի՝ օրենքով սահմանված պաշտոնավարման ժամկետը և լիազորությունների դադարեցումը

16. Ապահովագրական ընկերության խորհրդի անդամը վարձատրվում է ապահովագրական ընկերության կողմից: Ապահովագրական ընկերության խորհրդի անդամների վարձատրությունը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից, եթե այդ իրավասությունը չի փոխանցվել խորհրդին:

17. Ապահովագրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ապահովագրական ընկերության կանոնադրությամբ:

18. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Ընդհանուր ժողովի կողմից՝ իր դիմումի համաձայն: Լիազորությունները կարող են դադարեցվել նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

19. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների կատարմանը մնացած ժամանակահատվածի (իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա՝ մեկ տարվա) համար սահմանված աշխատավարձը ապահովագրական ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջել նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

6. Խորհրդի անդամի՝ օրենքով սահմանված պատասխանատվությունը

20. Խորհրդի անդամն իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի՝ ելնելով ապահովագրական ընկերության շահերից, իրականացնի իր իրավունքները և կատարի ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

21. Խորհրդի անդամը ապահովագրական ընկերության առջև պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով ընկերությանը պատճառած իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ապահովագրական ընկերությանը հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են այն խորհրդի անդամները, որոնք ապահովագրական ընկերությանը վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն եղել:

22.Խորհրդի անդամը ազատվում է ապահովագրական ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են ապահովագրական ընկերության շահերից: Մասնավորապես՝

1) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով կայացվել են որոշումներ, նույնիսկ, եթե դրանք ապահովագրական ընկերությանը հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ,
2) եթե խորհրդի անդամի կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես ուղղված միտման, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:

23. Ապահովագրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնից ազատվելը չի ազատում նրան իր մեղքով ապահովագրական ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

24. Ապահովագրական ընկերության խորհրդի անդամին Կենտրոնական բանկը հանում է գրանցումից, եթե վերջինս՝

1) ունի դատվածություն՝ դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար,
2) դատարանի կողմից զրկվել է ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
3) ճանաչվել է սնանկ և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
4) մասնագիտական համապատասխանության առումով չի համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական չափանիշներին,
5) անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես ապահովագրական ընկերության ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել ապահովագրական ընկերության գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել ապահովագրական ընկերության սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը,
6) քրեական գործով ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

7. Խորհրդի նախագահի՝ օրենքով սահմանված պարտականությունները

25. Ապահովագրական ընկերության խորհրդի նախագահը իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասությունները:

Խորհրդի նախագահը նաև ստորագրում է խորհրդի որոշումները և պատասխանատվություն կրում որոշումների մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 217-Ն որոշման

«Հավելված 44
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման,
գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման,
մասնագիտական համապատասխանության
ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

(ապահովագրական ընկերության, օտարերկրյա ապահովագրական ընկերության անվանումը)

իրական շահառուի վերաբերյալ

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Քաղաքացիություն
3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4. Անձը հաստատող փաստաթղթի տվյալները o Անձնագրի տվյալները o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
5. Նշեք o Հանրային ծառայությունների համարանիշ/ Հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը o Կիրառելի չէ
6. Նշեք o Հաշվառման վայր o Փաստացի բնակության վայր
7. Կապի միջոցները ○ Նշեք հեռախոսահամար ✓ բջջային ✓ այլ ○ Էլեկտրոնային փոստի հասցե
8. Իրական շահառու դառնալու ամսաթիվը (օր/ամիս/տարի)
9. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (ներկայացնել մանրամասներ, սույն կետի 1-ից 4-րդ ենթակետերի լրացման դեպքում նշել նաև մասնակցության չափը): Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում. ○ 1. ուղղակի տիրապետում է տվյալ ապահովագրական ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ ○ 2. անուղղակի տիրապետում է տվյալ ապահովագրական ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ ○ 3. ուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում, կամ

- ○ 4. անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում, կամ
- ○ 5. տվյալ ապահովագրական ընկերության նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
- ○ 6. հանդիսանում է տվյալ ապահովագրական ընկերության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

10. Միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ (միջանկյալ իրավաբանական անձն ապահովագրական ընկերության և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ է»)՝
    - ○ իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները
    - ○ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը

11. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

12. Սույնով հավաստիացնում ենք, որ տեղեկացված ենք և միաժամանակ տեղեկացրել ենք սույն հավելվածով իրական շահառու հանդիսացող անձին առ այն, որ
    - սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
    - տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
    - հայտարարագրով ներկայացված տվյալները՝ այդ թվում անձնական, Կենտրոնական բանկի կողմից կարող են փոխանցվել կամ բացահայտվել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին,
    - ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում ապահովագրական ընկերությունը (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը) կտեղեկացնի Կենտրոնական բանկին:

Կառավարման իրավասու մարմին՝ _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 103-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող պահանջներում ներառել ղեկավարների համապատասխանության գնահատմանը, մասնագիտական գիտելիքի ստուգմանը, որակավորմանը ներկայացվող պահանջները, հնարավորություն տալ ապահովագրական ընկերություններին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել ապահովագրական ընկերության շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի ««Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 163-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 103-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի Բաժին 3-ում «ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» բառերից հետո լրացնել «, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ», իսկ Գլուխ 3-ում «անձնակազմի կառավարում» բառերից հետո լրացնել «, ղեկավարների որակավորում և համապատասխանության գնահատում» բառերը,

2) Կանոնակարգի 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-րդ կետ.

«19.1 Ներքին հսկողության համակարգը ապահովագրական ընկերության ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգի առումով նվազագույնը նախատեսում է.

1) ղեկավարների մասնագիտական համապատասխանության գնահատման կարգը, ընթացակարգերը,
2) ղեկավարների «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պահանջների ստուգման ընթացակարգերը,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

3) ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, պատվիրակման դեպքում՝ որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը,
4) ղեկավարների որակավորման համապատասխանության ստուգման շարունակական ընթացակարգը,
5) Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները, դրանց նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 218-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստել ղեկավարների որակավորման մասնագիտացված գործառույթի զարգացմանը և կայացման խթանների ստեղծմանը, համապատասխանեցնել ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների որակավորման մոտեցումները վերահսկողության միջազգային սկզբունքներին, հնարավորություն տալ ֆինանսական կազմակերպություններին իրենց գործունեության բնույթին և ղեկավարների պարտականություններին բնորոշ որակավորման համակարգ ձևավորել, բարձրացնել ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում, ներդնել ֆինանսական կազմակերպություններում ղեկավարների փոխարինելիության ճկուն մեխանիզմներ, ինչպես նաև սահմանել կարգավորումներ, որոնք ուղղված են լիցենզավորման գործընթացում կանխարգելելու հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձանց մուտքը ֆինանսական կազմակերպություններ:

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 20–րդ հոդվածի 1-ին մասի դ) ենթակետը, 22-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 6-րդ մասը:

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ և որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատ-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

յանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման, Որոշմամբ հաստատված Կանոնակարգի անվանման մեջ և Կանոնակարգի բոլոր հավելվածներում՝ Կանոնակարգի անվանմանը հղումներում «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» բառերը փոխարինել «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» բառերով,

2) Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հաստատել «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 17/01-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է),

3) Կանոնակարգի 1-ին կետում «ընթացակարգերը» բառը փոխարինել «, մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման կարգը» բառերով,

4) Կանոնակարգի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և (կամ) նման այլ բացթողումների առկայության դեպքում Կենտրոնական բանկը դրանց մասին տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին: Համապատասխան դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և (կամ) փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից, ընդ որում՝ դիմումի (միջնորդագրի) մերժման համար հիմք կարող է հանդիսանալ փաստաթղթերի կրկին սխալ ներկայացումը:»,

5) Կանոնակարգը 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-րդ կետով.

«15.1. Վճարահաշվարկային կազմակերպության մասնաճյուղը կարող է չունենալ գլխավոր հաշվապահ՝ գլխամասի և մասնաճյուղի միջև իրական ժամանակի ռեժիմով (մասնաճյուղում կատարվող գործարքներն ակնթարթային արտացոլվում են տեղեկատվական բազայում և կազմակերպության հաշվեկշռում) գործունեություն ծավալելու համար կապի առկայության դեպքում:»,

6) Կանոնակարգի 16-րդ կետում.

ա. 3-րդ և 7-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ անձ, ով առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները և որի վրա տարածվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, բացառությամբ 2-րդ մասի «դ» կետի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,»,

գ. 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) «Որակավորման չափանիշներ՝ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ,»,

դ. 13-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-16-րդ նոր ենթակետերով.

«14) Մասնագիտական համապատասխանության չափանիշներ՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,

15) Որակավորող կազմակերպություն՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող՝ վճարահաշվարկային կազմակերպության կողմից ընտրված կազմակերպություն,

16) Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքով կիրառվող նշանակությունը:»,

7) Կանոնակարգի 17-րդ կետի 3-րդ ենթակետում «115-րդ, 116-րդ կամ 118-րդ» բառերը փոխարինել «113-րդ և 117-րդ» բառով,

8) Կանոնակարգի 18-րդ կետի 4-րդ ենթակետը «Հավելված 3-ի:» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Հավելվածով ներկայացվում է նաև գրավոր հայտարարություն վճարահաշվարկային կազմակերպությունում 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող ֆիզիկական անձ մասնակցի՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու կամ այդպիսի դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու մասին»,

9) Կանոնակարգի 18-րդ կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1 ենթակետով.

«4.1) Վճարահաշվարկային կազմակերպությունում 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում նաև՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն:»,

10) Կանոնակարգի 18-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի գրանցման վերաբերյալ միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի Ձև 1-ի և Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի Ձև 2-ի»,

11) Կանոնակարգի 18-րդ կետը 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1 ենթակետով.

«9.1) ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում նաև՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»,

12) Կանոնակարգի 79.2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 79.3-րդ ենթակետ.

«79.3. Մինչև 2023 թ.-ի փետրվարի 1-ը գործող վճարահաշվարկային կազմակերպությունները պարտավոր են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնել իրենց 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցների և ղեկավարների դատվածություն ունենալու (ներառյալ՝ այդ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու) վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 15-ի: Ընդ որում՝ դատվածությունը պետք է առաջացած լինի 2019 թվականի հուլիսի 27-ից հետո ընկած ժամանակահատվածում:

13) Կանոնակարգի 80-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 5-ի Ձև 1-ի և ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի Ձև 2-ի»,

14) Կանոնակարգի 80-րդ կետը 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 ենթակետով.

«1.1) ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում նաև՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմինների կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»,

15) Կանոնակարգի 80-րդ կետը 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ ենթակետով.

«4) հիմնավորումներ և (կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և (կամ) վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարների՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը:»,

16) Կանոնակարգի 81-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«81. Ղեկավարների գրանցումը ներառում է.

1) թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,

2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 82.1 կետով սահմանված դեպքերի:»,

17) Կանոնակարգի 82-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«82. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 81-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:»,

18) Կանոնակարգը 82-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 82.1-րդ կետով.

«82.1. Սույն կանոնակարգի 81-րդ կետով սահմանված ընթացակարգով գրանցելիս ղեկավարների թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:»,

19) Կանոնակարգի 83-րդ կետը «տասնօրյա ժամկետում:» բառերից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Ընդ որում՝ ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է որակավորման վկայական ունեցող՝ համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

20) Կանոնակարգի 86-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«86. Մինչև երեք ամիս ժամկետով ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնա-

կան բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը և անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):»,

21) Կանոնակարգի 87-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«87. Կենտրոնական բանկն իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 86-րդ կետի համաձայն ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով վճարահաշվարկային կազմակերպությանը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում ազատել նշված անձին այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:»,

22) Կանոնակարգի 88-րդ, 89-րդ և 90-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

23) Կանոնակարգի 91-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«91. Անձին որպես ղեկավար գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե.

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,

2) անձը չի համապատասխանում օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի նկատմամբ սահմանված պահանջներին:»,

24) Կանոնակարգի 92-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

25) Կանոնակարգի 93-րդ կետում «115-րդ» բառը փոխարինել «117-րդ» բառով,

26) Կանոնակարգի 94-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«94. Վճարահաշվարկային կազմակերպությունն իր հաշվապահական հաշվառման իրականացման գործընթացը կարող է հանձնել հաշվապահական հաշվառում իրականացնող կազմակերպությանը (ընկերությանը)՝ կնքելով համապատասխան պատվիրակման պայմանագիր:»,

27) Կանոնակարգի 95-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«95. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ վճարահաշվարկային կազմակերպությունում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:»,

28) Կանոնակարգի 96-րդ կետը կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«96. Կենտրոնական բանկի որոշմամբ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը հանվում է գրանցումից, եթե.

1) վճարահաշվարկային կազմակերպությունը դիմել է համապատասխան միջնորդությամբ,

2) խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,

3) ղեկավարը զրկվել է որակավորումից:»,

29) Կանոնակարգը 97-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 97.1-րդ կետով.

«97.1. Եթե Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը հանվել է գրանցումից սույն կանոնակարգի 96-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա, ապա ղեկավարին գրանցումից հանելու Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում չի կարող գրանցվել որպես սույն կանոնակարգի Հավելված 5-ի Ձև 2-ի 1.2 ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:»,

30) Կանոնակարգի գլուխ 14-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 14

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

113. Ղեկավարները պետք է բավարարեն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ունենան վճարահաշվարկային կազմակերպության կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:

114. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է վճարահաշվարկային կազմակերպությունը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Վճարահաշվարկային կազմակերպությունները պետք է ունենան և Կենտրոնական բանկ ներկայացնեն կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում՝ որակավորող կազմակերպությանը ներկայացվող չափանիշները և ընտրության կարգը, ինչպես նաև ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները և վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

115. Վճարահաշվարկային կազմակերպությունը, համաձայն ներքին կանոնակարգերի, ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

116. Նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:

117. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները բավարարում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշներին, եթե բավարարում են սույն կանոնակարգի 118-րդ կետի պահանջներին:

118. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը պետք է.

1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,
2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի կազմակերպության գործունեության բիզնես մոդելը և միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:

119. Կենտրոնական բանկը կարող է վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով վճարահաշվարկային կազմակերպության կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում»,

31) Կանոնակարգի գլուխ 15-ը, 16-ը, 17-ը և 18-ը ուժը կորցրած ճանաչել,

32) Կանոնակարգի Հավելված 3-ում.

ա. 4-րդ կետի 4.2 ենթակետում «բանկի» բառը փոխարինել «վճարահաշվարկային կազմակերպության» բառով,

բ. 4-րդ կետի 4.4 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

4.4. Արդյո՞ք վճարահաշվարկային կազմակերպությունում 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող ֆիզիկական անձ մասնակիցն ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար:	Այո ☐	Ոչ ☐
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու վերաբերյալ		

»,

գ. 4-րդ կետը 4.4 ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.5 նոր ենթակետով.

«4.5. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն»,

33) Կանոնակարգի հավելվածներ 3.1-ը, 10-ը, 10.1-ը, 13-ը և 14-ը ուժը կորցրած ճանաչել,

34) Հավելված 5-ի Ձև 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

35) Հավելված 5-ի Ձև 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի,

36) Կանոնակարգը լրացնել հավելված 15-ով՝ համաձայն սույն որոշման հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից չորս ամիս անց, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ,14-րդ, 32-րդ և 36-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկի կողմից ղեկավարներին տրված որակավորման վկայականները շարունակում են գործել մինչև դրանց ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն կազմակերպությունում նույն պաշտոնում:

4. Ղեկավարներին տրված որակավորման վկայականների ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրանալու դեպքում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ փոփոխված կանոնակարգով սահմանված ղեկավարի որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում: Սույն կետը տարածվում է այն ղեկավարների վրա, որոնք գրանցվել են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և շարունակում են պաշտոնավարել նույն կազմակերպությունում նույն պաշտոնում (սույն կետում նշված որակավորման վկայականը պահանջող պաշտոնում):

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 219-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 219-Ն որոշման

«Հավելված 5-ի Ձև 1
«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման,
մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական
համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 17/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահի
_____ ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)
գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպության կողմից սահմանված որակավորման չափանիշներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Վճարահաշվարկային կազմակերպության
կառավարման իրավասու մարմին՝ _____
/անուն, ազգանուն, ստորագրություն/

« » --------- 20 թ.:

»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 219-Ն որոշման

«Հավելված 5-ի Ձև 2
«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման,
մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական
համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 17/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (Այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ

o գլխավոր հաշվապահ
o ներքին աուդիտի ղեկավար
o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3. 5 Նշեք՝
- Հաշվառման հասցե
- Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
- Անձնագրի տվյալները
- Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
- Հանրային ծառայությունների համարանիշը
- Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
- բջջային
- այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4. 2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Աշխատանքի ընդունման և ազատման ամսաթիվ ըստ ժամկետների	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության գտնվելու վայրը	Զբաղեցրած պաշտոնը	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարվեք, եթե աշխատանքային գրքույկում նկարագրված չէ

4.5 Նշեք

- Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դիրքը ներկայումս	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային ստորինեքսը	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխհարաբերության բնույթը

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
o Ոչ,
o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5. 7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1. 2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,

o Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

○ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն, ազգանուն	**Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը**	**Ղեկավարի հետ կապակց-վածության ձև**	**Աշխատանքի վայր**	**Պաշտոն**

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք:
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ:
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

○ Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապակցվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9. 3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11.Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13.Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն | *Ամրակցեք ստորագրության նմուշը*

»:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 219-Ն որոշման

«Հավելված 15
«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման, մասնաճյուղերի հաշվառման, ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 17/01-ի

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 10 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈԿՈՍ ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՎՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք ունեցող անձինք					
Անվանումը (Անուն, ազգանուն)	ՀՎՀՀ (անձնագրի տվյալները)	ՀԾՀ	Գործունեության ոլորտը (ըստ կայքի)	Մասնակցության չափը	Արդյո՞ք անձն ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար, եթե «այո»՝ ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու վերաբերյալ)
2. Ղեկավարների վերաբերյալ տեղեկատվություն					
Անուն ազգանուն	Անձնագրի տվյալները	ՀԾՀ	Բնակության վայրը		Արդյո՞ք անձն ունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար, եթե «այո»՝ ներկայացնել մանրամասներ, այդ թվում՝ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու վերաբերյալ)

Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական:

Տեղեկացված ենք և տեղեկացրել ենք սույն հաշվետվությունում ներկայացված անձանց առ այն, որ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում ենք սույն հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության փոփոխության դեպքում այդ մասին 5 աշխատանքային օրվա տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:

Վճարահաշվարկային կազմակերպության
կառավարման իրավասու մարմին՝ _____

/անուն, ազգանուն, ստորագրություն/

« » --------- 20 թ.:

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու արդյունավետ ընթացակարգ՝ ներդրումային ընկերությունների իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 36-րդ հոդվածը, 61.1-րդ հոդվածը, 45-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ և Որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Որոշման վերնագրից, 1-ին կետից և Կանոնակարգի վերնագրից հանել «, վարկային կազմակերպության» բառերը:
2) Կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1» պարբերությամբ.

«գ1. ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

3) Կանոնակարգի 35-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ1» պարբերությամբ.

«դ1. ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

4) Կանոնակարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,»:

5) Կանոնակարգի 49-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգի 51-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,»:

7) Կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել:

8) Կանոնակարգի 92-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ ենթակետով.

«1.1) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,» :

9) Կանոնակարգի 97-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ ենթակետով.

«1.1) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

10) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 18.1

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

104.1 Ներդրումային ընկերությունը կամ օտարերկրյա ներդրումային ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղը (այսուհետ՝ այս գլխում ներդրումային ընկերություն) պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով ներդրումային ընկերության իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ ներդրումային ընկերության իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

104.2 Սույն կանոնակարգի 104.1-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար ներդրումային ընկերությունը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասի-

րությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել ներդրումային ընկերության իրական շահառու:

104.3 Սույն կանոնակարգի 104.2-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում ներդրումային ընկերությունը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև ներդրումային ընկերության մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել ներդրումային ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Ներդրումային ընկերությանն արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

104.4 Ներդրումային ընկերությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընկերության իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 29-ի:

104.5. Սույն կանոնակարգի 104.4-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ ներդրումային ընկերության իրական շահառու համարվելու մասին ներդրումային ընկերության տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

104.6 Անկախ սույն կանոնակարգի 104.5-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը ներդրումային ընկերությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
2) փոփոխված տեղեկություններ ներդրումային ընկերության իրական շահառուների վերաբերյալ:»:

11) Կանոնակարգի 126-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ մասնաճյուղի, ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի»,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով.

«6) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 29-ի:»:

12) Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

13) Հավելված 8-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

14) Հավելված 9-ում՝

ա. վերնագրում «Ներկայացուցչության» բառը փոխարինել «Մասնաճյուղի և ներկայացուցչության» բառերով,

բ. 1-ին կետը «որի» բառից հետո լրացնել «մասնաճյուղի կամ» բառերով,

գ. «Ներկայացուցչության ղեկավարի ստորագրություն» բառերը փոխարինել «Մասնաճյուղի (ներկայացուցչության) ղեկավարի ստորագրություն» բառերով,

դ. «Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական և վերոնշված անձի ստորագրությունը համապատասխանում է իսկականի հետ:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավաստիացնում եմ, որ

- սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,
- մասնաճյուղի ղեկավարը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև ներդրումային ընկերության կողմից սահմանված որակավորման չափանիշներին:»:

15) Հավելված 15-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի:

16) Կանոնակարգը լրացնել Հավելված 29-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 220-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 220-Ն որոշման

«Հավելված 7
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային
ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների
մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների
կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար
նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների
կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից
ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ին

Հարգելի _____
Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)
գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև ներդրումային ընկերության կողմից սահմանված որակավորման չափանիշներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Ներդրումային ընկերության կառավարման իրավասու մարմին՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

« » --------- 20 թ.:»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 220-Ն որոշման

«Հավելված 8
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1.Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ

o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
o գլխավոր հաշվապահ
o ներքին աուդիտի ղեկավար
o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
o Հաշվառման հասցե
o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
o բջջային
o այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
o Անուն, ազգանուն, հայրանուն
o Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ,
o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	**Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)**	**Մասնակցության չափը (%),**	**Բաժնետոմսերի քանակը**	**Ընդհանուր գումարը (դրամով)**

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,

o Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

- ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն,ազգանուն	**Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը**	**Ղեկավարի հետ փոխկապակցվածության ձև**	**Աշխատանքի վայր**	**Պաշտոն**

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

8.Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13.Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

»:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 220-Ն որոշման

«Հավելված 15
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01
Հավելվածի

Դիմում
Ֆիզիկական անձի կողմից ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
_____ ին

Հարգելի _____

Ես՝ , խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
_____
(նշվում է ներդրումային ընկերության անվանումը)
ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.

Լրացվում է ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի կողմից

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը	
1. Ֆիզիկական անձի տվյալները	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____	
1.2. Սեռը _____	
1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____ *օր/ամիս/տարի*	
1.4. Ծննդավայրը _____	
1.5. Քաղաքացիությունը _____	
1.6. Անձնագրի տվյալները _____	
Հանրային ծառայությունների համարանիշը _____	
1.7. Բնակության վայրը՝ հաշվառման հասցե _____	
փաստացի բնակության վայրի հասցե _____	

1.8. Հեռախոսահամար _____

1.9. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը,ազգանունը, հայրանունը	Դրանք կրելու ժամանակաշրջանը	
	Սկիզբ (օր/ամիս/տարի)	Ավարտ (օր/ամիս/տարի)

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

2.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության (ԲՈՒՀ) անվանումը, միջազգային որակավորման անվանումը	**ԲՈՒՀ-ի գտնվելու վայրը**	**ԲՈՒՀ-ում սովորելու ժամանակաշրջանը (_____թ-ից մինչև _____թ.)**	**Ֆակուլտետ**	**Մասնա-գիտությունը**	**Գիտական աստիճանը կամ միջազգային որակավորման մակարդակը**
1.					
2.					
3.					
4.					

2.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o Հայերեն

o Անգլերեն

o Ռուսերեն

o Այլ (նշել լեզուն)

_____

2.3. Վերջին 10 տարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ամիսները և ժամկետները	**Կազմակերպության անվանումը**	**Կազմակերպության գործունեության տեսակ**	**Գտնվելու վայր**	**Հեռախոսահամար**	**Պաշտոնը, հիմնական պարտականությունները**	**Ազատման հիմքերը**	**Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն**

2.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ

Անուն, ազգանուն	**Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը**	**Պաշտոնը**	**Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները**	**Հեռախոսահամար, էլ.փոստի հասցե**

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա:

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (բաժնեմասեր)

3.1. Բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թիվը

_____ _____
Գումար *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող

_____ _____
Գումար *%*

3.2.Յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) ձեռքբերման գինը _____

3.3. Բաժնետոմսի (բաժնեմասի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

4.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2. Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝

Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 4.3 կետը

4.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը _____

գ) Վարկի/փոխառության գումարը _____

դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի

4.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		
3.		

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ:

(Կենտրոնական բանկը կարող է պահանջել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցությունների վերաբերյալ

6.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 17-ը:

6.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը	Գտնվելու (բնակության) վայրը	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		
3.		

8. Այլ տեղեկատվություն

8.1 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ.

o Այո (ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)

o Ոչ

8.2 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.3 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ

o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

8.4 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.5 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դատարանը ընդունել է վարույթ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.6 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.7 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.8 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.9 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում որևէ կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.10 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

8.11 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ներդրումային ընկերության նկատմամբ, որի կանոնադրական կապիտալում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

o Ոչ

o Այո (ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)

8.12 Արդյո՞ք Դուք պատրաստ եք ներդրումային ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն.

o Ոչ

o Այո, (ներկայացնել մանրամասներ)

8.13 Արդյո՞ք ներդրումային ընկերության կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում Ձեր կողմից առաջարկվում են որևէ փոփոխություններ.

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.14 Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

9. Հավաստիացնում եմ, որ

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական:

Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

բ) բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ ներդրումային ընկերությունում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնում եմ իրավական ակտերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ՝

ա) իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին,

բ) սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ տրամադրելով իմ անձնական տվյալները և պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Անունը, ազգանունը _____

Ստորագրություն_____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

ՄԱՍ II

Լրացվում է ներդրումային ընկերության կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը

_____ կողմից

(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի անունը և ազգանունը)

_____ ներդրումային ընկերության

(նշվում է ներդրումային ընկերության անվանումը)

կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

2. Հավաստիացնում ենք, որ _____

(նշվում է ներդրումային ընկերության անվանումը)

ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում ներդրումային ընկերության մասնակցի՝ բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:

(Սույն կետը չի լրացվում ներդրումային ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)

Ներդրումային ընկերության կառավարման մարմնի իրավասու անձի անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

(օր, ամիս, տարի)

»:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 220-Ն որոշման

«Հավելված 29
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

(ներդրումային ընկերության անվանումը)

իրական շահառուի վերաբերյալ

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Քաղաքացիություն
3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4. Անձը հաստատող փաստաթղթի տվյալները o Անձնագրի տվյալները o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
5. Նշեք o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը) o Կիրառելի չէ
6. Նշեք o Հաշվառման վայր o Փաստացի բնակության վայր
7. Կապի միջոցները o Նշեք հեռախոսահամար ✓ բջջային ✓ այլ o Էլեկտրոնային փոստի հասցե
8. Իրական շահառու դառնալու ամսաթիվը (օր/ամիս/տարի)
9. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (ներկայացնել մանրամասներ, սույն կետի 1-4-րդ ենթակետերի լրացման դեպքում նշել նաև մասնակցության չափը)։ Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում. o 1. ուղղակի տիրապետում է տվյալ ներդրումային ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ o 2. անուղղակի տիրապետում է տվյալ ներդրումային ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ o 3. ուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում, կամ o 4. անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալում, կամ

- o 5. տվյալ ներդրումային ընկերության նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
- o 6. հանդիսանում է տվյալ ներդրումային ընկերության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

10. Միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ (միջանկյալ իրավաբանական անձը ներդրումային ընկերության և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ է»)՝
    - o իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները
    - o իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը

11. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

12. Սույնով հավաստիացնում ենք, որ տեղեկացված ենք և միաժամանակ տեղեկացրել ենք սույն հավելվածով իրական շահառու հանդիսացող անձին առ այն, որ
    - o սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
    - o տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
    - o հայտարարագրով ներկայացված տվյալները՝ այդ թվում անձնական, Կենտրոնական բանկի կողմից կարող են փոխանցվել կամ բացահայտվել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին,
    - o ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում ներդրումային ընկերությունը (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը) կտեղեկացնի Կենտրոնական բանկին:

Կառավարման իրավասու մարմին՝ _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ համարվելու պահանջները, ինչպես նաև բարձրացնելու ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը, 50-րդ հոդվածի 2-րդ մասը, 104-րդ հոդվածի 1-ին մասը, 184-րդ հոդվածի 1-ին մասը և 221-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման վերնագրում, Որոշման 1-ին կետում և որոշմամբ հաստատված Կանոնակարգի վերնագրում «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ» բառերը փոխարինել «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ» բառերով:
2) Կանոնակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

3. Սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարներին մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրված որակավորումները շարունակում են գործել մինչև տվյալ որակավորման ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն կազմակերպությունում՝ նույն պաշտոնում:

4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարի՝ ընկերության ներքին կանոններով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում, եթե.

1) տվյալ ղեկավարը գրանցվել է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և շարունակում է պաշտոնավարել նույն կազմակերպությունում՝ նույն պաշտոնում, և Կենտրոնական բանկի կողմից նրան տրված որակավորման ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրացել է, կամ
2) Կենտրոնական բանկի կողմից տվյալ ղեկավարին տրված որակավորման ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չի լրացել, սակայն ղեկավարը ներկայացվում է գրանցման նոր կազմակերպությունում:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար գրանցված անձինք համարվում են Կենտրոնական բանկում գրանցումից հանված:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 221-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 221-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/05
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի

(այսուհետ՝ օպերատոր), Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող անձանց որակավորման կարգը, ինչպես նաև ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման ընթացակարգը:

2. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար համարվող անձանց, ինչպես նաև ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի) ներքին կանոնակարգերի համաձայն՝ ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք համապատասխան կազմակերպության (ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի) ներքին կանոնակարգերի համաձայն որակավորման չափանիշներին բավարարելու դեպքում համարվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող:

3. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի (այսուհետ՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձ), օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

4. Նոր ստեղծվող ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում՝ ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի Էֆ» ֆորմատով:

5. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Ընդ որում՝ սույն կետում նշված միջնորդագրերը (դիմումները) էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն «Փի-ԴԻ-Էֆ» ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Դիմող ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի ընդլայնումը

Օրինակ.

ԱԲԳ	-	միջնորդագիր	-	Ղեկ. գրանցում	-	250922	-	Pdf

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) «Կենտրոնական բանկ». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) «Հանձնաժողով». Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
3) «ղեկավար». Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավար, մասնավորապես՝

ա. ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ղեկավարը,

բ. օպերատորի դիտորդ խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամը (այդ թվում՝ գործադիր մարմնի ղեկավարը և գործադիր տնօրենի տեղակալը), վերահսկող ծառայության ղեկավարը, կարգապահական հանձնաժողովի նախագահը կամ նման այլ մարմինների ղեկավարը,

գ. Կենտրոնական դեպոզիտարիայի դիտորդ խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը և անդամները (այդ թվում՝ գործադիր տնօրենի տեղակալը) և վերստուգող հանձնաժողովի ղեկավարը կամ նման այլ մարմինների ղեկավարը,

4) «հանրային ծառայությունների համարանիշ». Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
5) «անձնագրի տվյալներ». անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը,
6) «ֆինանսական վիճակի վատթարացում». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ով սահմանված դեպքերից որևէ մեկը,
7) «Օրենք». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
8) «ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար». անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները և որի վրա տարածվում են Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջի,
9) «որակավորման չափանիշներ». ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ,
10) «մասնագիտական համապատասխանության չափանիշներ». Օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,
11) «որակավորող կազմակերպություն». ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ընտրված՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող կազմակերպություն:

8. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Ղեկավարները պետք է բավարարեն իրենց համար Օրենքի 58-րդ, 114-րդ կամ 179-րդ հոդվածներով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին, ունենան ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:

10. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան)՝ համաձայն ներքին կանոնակարգերի:

11. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն ղեկավարների, ինչպես նաև սույն կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված անձանց որակավորման չափանիշները, ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում՝ որակավորող կազմակերպության նկատմամբ չափանիշները և ընտրության կարգը, ինչպես նաև ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները և վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

12. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

13. Նոր ստեղծվող ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների և սույն կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված անձանց որակավորման չափանիշների համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:

14. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ խորհրդի կազմը պետք է բավարարի խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձառության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքին:

15. Կենտրոնական բանկը կարող է ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ընկերության կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում:

ԳԼՈՒԽ 4. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

16. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարը պետք է ունենա՝

1. ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,
2. ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի ընկերության գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:

ԳԼՈՒԽ 5. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

17. Ղեկավարների գրանցումը ներառում է՝

1. թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի (օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև Օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2. թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված դեպքերի:

18. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան) Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1. անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 1-ի,
2. ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 2-ի,
3. ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,
4. կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,
5. հիմնավորումներ և(կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարի՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը:

19. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:

20. Ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ: Ընդ որում, ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է Օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող:

21. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ղեկավարների գրանցման՝ Օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք

ամիս ժամկետով: Ընդ որում՝ գրանցման՝ Օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 1-րդ կետով սահմանված 90 օրյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել 90 օրյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

22. Սույն կանոնակարգի համաձայն ղեկավարներին գրանցելիս թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

23. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և ներդրումային ծառայություններ մատուցող անձը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը:

24. Անձի՝ որպես ղեկավարի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե

1. ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում Օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
2. անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույց» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
3. անձը չի համապատասխանում Օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի համար սահմանված պահանջներին:

25. Ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կազմում կամ Կենտրոնական դեպոզիտարիայում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:

ԳԼՈՒԽ 6. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից հետևյալ դեպքերում՝

1) ներդրումային ծառայություններ մատուցող անձը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան դիմել է համապատասխան միջնորդությամբ,
2) լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների նշանակման պահից,
3) խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
4) եթե անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույցը» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
5) ղեկավարը զրկվել է որակավորումից:

27. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ներդրումային ծառայություններ մատուցող անձը, օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան ղեկավարների կազմում փոփոխություն տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1. ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2. ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

28. Եթե ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարը հանվել է գրանցումից սույն կանոնակարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա, ապա ղեկավարին գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես սույն կանոնակարգի Հավելված 2-ի 1.2-րդ ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:

ԳԼՈՒԽ 7. ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Ղեկավարի պաշտոնը կարող է թափուր մնալ ոչ ավելի քան 90 օր՝ սկսած ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ղեկավարին պաշտոնից ազատելու պահից:

30. Ղեկավարի պաշտոնը թափուր մնալու դեպքում կարող է նշանակվել ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև 90 օր ժամկետով: Ընդ որում, 90 օրյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար (միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում 90 օրյա ժամկետը):

31. Սույն կանոնակարգի 30-րդ կետով նախատեսված՝ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան) նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից արդեն իսկ գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):

32. Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 30-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով կազմակերպությանը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում ներդրումային ծառայություններ մատուցող անձը (օպերատորը կամ Կենտրոնական դեպոզիտարիան) պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

33. Ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 221-Ն որոշման

«Հավելված 1
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի,
Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ
մատուցող ֆիզիկական անձանց որակավորման կարգը, նրանց մասնագիտական
համապատասխանության չափանիշներն ու գրանցման կարգը» Կանոնակարգ 4/05-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____ ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

Գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև կազմակերպության կողմից սահմանված մասնագիտական որակավորման չափանիշներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Ներդրումային ընկերության
(օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի)
կառավարման իրավասու մարմին՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«____» _____ 20 թ.:»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 221-Ն որոշման

«Հավելված 2
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի,
Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ
մատուցող ֆիզիկական անձանց որակավորման կարգը, ղեկավարների մասնագիտական
համապատասխանության չափանիշներն ու գրանցման կարգը» Կանոնակարգ 4/05-ի

ՏԵՂԵԿԱՆՔ

Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1.Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ

o ներքին աուդիտի ղեկավար
o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
o Հաշվառման հասցե
o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
o բջջային
o այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
o Անուն, ազգանուն, հայրանուն
o Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

- Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսա-համար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

   «1.1) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

---

* *Ոչ պաշտոնական հրապարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

3) Կանոնակարգի 42-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ ենթակետով.

«1.1) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

4) Կանոնակարգը 9-րդ լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 9.1

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

50.1. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

50.2. Սույն կանոնակարգի 50.1-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու:

50.3. Սույն կանոնակարգի 50.2-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Կենտրոնական դեպոզիտարիային արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

50.4. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի:

50.5. Սույն կանոնակարգի 50.4-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու համարվելու մասին Կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

50.6. Անկախ սույն կանոնակարգի 50.5-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ

2) փոփոխված տեղեկություններ Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառուների վերաբերյալ:

5) Կանոնակարգի 68-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«68. Կենտրոնական դեպոզիտարիան լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում փոփոխության օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական և այլ համակարգերի նվազագույն տեխնիկական պահանջների և հուսալիության՝ սույն կանոնակարգի 11-րդ գլխով սահմանված չափանիշների փոփոխությունների վերաբերյալ գրություն՝ ներկայացնելով նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ սույն կանոնակարգի գլուխ 11-ով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին փաստաթղթերը,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի:»:

6) Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

7) Հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

8) Հավելված 9-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի:

9) Կանոնակարգը լրացնել Հավելված 19-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 223-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի
թիվ 223-Ն որոշման

«Հավելված 4
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը,
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից
մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
----------ին

Հարգելի _____
Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)
գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Կենտրոնական դեպոզիտարիայի կառավարման իրավասու մարմին՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

« » --------- 20 թ.:»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 223-Ն որոշման

«Հավելված 5
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը,
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում
նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/02-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1. Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ o ներքին աուդիտի ղեկավար o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ

o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
o Հաշվառման հասցե
o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
o բջջային
o այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում
- o հայերեն
- o անգլերեն
- o ռուսերեն
- o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության բնույթ	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

- o Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսա-համար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

- o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
- o Ոչ,
- o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

- այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

- այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

- ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ փոխկապակց-վածության ձև	Աշխատան-քի վայր	Պաշտոն

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվեփոխ թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ փնտրեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվեփոխ թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ փնտրեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12.Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13.Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

»:

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 223-Ն որոշման

«Հավելված 9
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
Կանոնակարգ 5/02 Հավելվածի

Դիմում
Ֆիզիկական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Ես՝ , խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
_____ Կենտրոնական դեպոզիտարիայում
(նշվում է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)
նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.

Լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ մասնակցի կողմից

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը

1. Ֆիզիկական անձի տվյալները

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____

1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____
(օր/ամիս/տարի)

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի տվյալները _____
Հանրային ծառայությունների համարանիշը _____

1.7. Բնակության վայրը՝
հաշվառման հասցե _____
փաստացի բնակության վայրի հասցե _____

1.8. Հեռախոսահամար _____

1.9. Էլեկտրոնային փոստի հասցե _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը, ազգանունը, հայրանունը	**Դրանք կրելու ժամանակաշրջանը**	
	Սկիզբ (օր/ամիս/տարի)	Ավարտ (օր/ամիս/տարի)

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

2.1.

Բարձրագույն ուսումնական հաստատության (ԲՈՒՀ) անվանումը, միջազգային որակավորման անվանումը	ԲՈՒՀ-ի գտնվելու վայրը	ԲՈՒՀ-ում սովորելու ժամանակաշրջանը (_____թ-ից մինչև _____թ.)	Ֆակուլտետ	Մասնա-գիտությունը	Գիտական աստիճանը կամ միջազգային որակավորման մակարդակը
1.					
2.					
3.					
4.					

2.2. Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o Հայերեն
o Անգլերեն
o Ռուսերեն
o Այլ (նշել լեզուն)

2.3. Վերջին 10 տարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ամսաթվերը	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության գործունեության տեսակը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը	Պաշտոնը, հիմնական պարտականու-թյունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

2.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված անձ չկա:

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (բաժնեմասեր)

3.1.

Բաժնետոմսերի (բաժնեմասերի) ընդհանուր թիվը _____ *գումար* _____ *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ *գումար* _____ *%*

3.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (բաժնեմասի) ձեռքբերման գինը _____

3.3. Բաժնետոմսի (բաժնեմասի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

4.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2. Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝

Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 4.3 կետը

4.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը _____

գ) Վարկի/փոխառության գումարը _____

դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի

4.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		
3.		

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ: *(Կենտրոնական բանկը կարող է պահանջել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):*

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական կապիտալում մասնակցությունների վերաբերյալ

6.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 11-ը:

6.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն:

Կազմակերպության անվանումը, անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը	Գտնվելու (բնակության վայրը)	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		
3.		

8. Այլ տեղեկատվություն

8.1 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ.

o Այո *(ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)*

o Ոչ

8.2 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.3 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ

o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

8.4 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.5 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դատարանը ընդունել է վարույթ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.6 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.7 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.8 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

8.9 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում որևէ կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.10 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

8.11 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ, որի կանոնադրական կապիտալում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն.

o Ոչ

o Այո (ներկայացնել մանրամասները՝ գումար, ժամկետ և այլն)

8.12 Արդյո՞ք Դուք պատրաստ եք Կենտրոնական դեպոզիտարիայի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն.

o Ոչ

o Այո, (ներկայացնել մանրամասներ)

8.13 Արդյո՞ք Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված գործարար ծրագրում Ձեր կողմից առաջարկվում են որևէ փոփոխություններ.

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասներ

8.14 Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

9. Հավաստիացնում եմ, որ

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության.

բ) բացակայում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնում եմ օրենքով և կանոնակարգերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ՝

ա) իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին,

բ) սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ տրամադրելով իմ անձնական տվյալները և պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Անունը, ազգանունը_____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

ՄԱՍ II

Լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը
_____ կողմից

(նշվում է նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի անունը և ազգանունը)

_____ Կենտրոնական

(նշվում է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

2. Հավաստիացնում ենք, որ

_____

(նշվում է Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակցի՝ բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:

(Սույն կետը չի լրացվում Կենտրոնական դեպոզիտարիայի մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)

Կենտրոնական դեպոզիտարիայի խորհրդի նախագահի
կամ գործադիր տնօրենի կամ վարչության նախագահի
(եթե այդ լիազորությունները վերապահված է նրանց
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրությամբ կամ
ընդհանուր ժողովի կողմից) անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

(օր,ամիս,տարի)

»:

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 223-Ն որոշման

«Հավելված 19
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը,
Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից
մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/02-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

(Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը)

իրական շահառուի վերաբերյալ

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Քաղաքացիություն
3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4. Անձը հաստատող փաստաթղթի տվյալները o Անձնագրի տվյալները o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
5. Նշեք o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը) o Կիրառելի չէ
6. Նշեք o Հաշվառման վայր o Փաստացի բնակության վայր
7. Կապի միջոցները o Նշեք հեռախոսահամար ✓ բջջային ✓ այլ o Էլեկտրոնային փոստի հասցե
8. Իրական շահառու դառնալու ամսաթիվը (օր/ամիս/տարի)
9. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (ներկայացնել մանրամասներ, սույն կետի 1-4-րդ ենթակետերի լրացման դեպքում նշել նաև մասնակցության չափը): Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում. 1. ուղղակի տիրապետում է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ 2. անուղղակի տիրապետում է Կենտրոնական դեպոզիտարիայի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ 3. ուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում, կամ 4. անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում, կամ

5. Կենտրոնական դեպոզիտարիայի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
6. Հանդիսանում է Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

10. Միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ (միջանկյալ իրավաբանական անձը Կենտրոնական դեպոզիտարիայի և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ է»)՝
    - իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները
    - իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը

11. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

12. Սույնով հավաստիացնում ենք, որ տեղեկացված ենք և միաժամանակ տեղեկացրել ենք սույն հավելվածով իրական շահառու հանդիսացող անձին առ այն, որ
    - սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
    - տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
    - հայտարարագրով ներկայացված տվյալները՝ այդ թվում անձնական, Կենտրոնական բանկի կողմից կարող են փոխանցվել կամ բացահայտվել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին,
    - ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան կտեղեկացնի Կենտրոնական բանկին:

Կառավարման իրավասու մարմին՝ _____

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Ստորագրություն _____

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու արդյունավետ ընթացակարգ ներդրումային ֆոնդերի կառավարիչների իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 62.1-րդ հոդվածը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 61.1-րդ հոդվածը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ, հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 10/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի 3-րդ բաժնի վերնագիրը «ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ» բառերով:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

2) Կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ. ղեկավարների գրանցման միջնորդագրերը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, իսկ ղեկավարների մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ընդ որում ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,»:

3) Կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ1» պարբերությամբ.

«զ1. ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

4) Կանոնակարգի 42-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ղեկավարների գրանցման միջնորդագրերը ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, իսկ ղեկավարների մասին տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, ընդ որում, ղեկավարների վավերացված ստորագրությունների նմուշները ևս ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,»:

5) Կանոնակարգի 42-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ ենթակետով.

«3.1. ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,»:

6) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 10.1.

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

52.1. Ներդրումային ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղի իրական շահառու հանդիսացող անձանց բացահայտման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են Կանոնակարգ 4/01-ի համապատասխան դրույթները՝ «ներդրումային ընկերության», «օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի» փոխարեն հասկանալով և համապատասխան փաստաթղթերում լրացնելով «ներդրումային ֆոնդի կառավարիչ» կամ «օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղ»:»:

7) Հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

8) Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 224-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 224-Ն որոշման

«Հավելված 5
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
Կանոնակարգ 10/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Ներդրումային ֆոնդի կառավարչի իրավասու մարմին՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

« » --------- 20 թ.:»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 224-Ն որոշման

«Հավելված 6
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
Կանոնակարգ 10/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1 Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ

o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ
o գլխավոր հաշվապահ
o ներքին աուդիտի ղեկավար
o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
o Հաշվառման հասցե
o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
○ բջջային
○ այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման ամիսը և տարեթիվը	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության գտնվելու վայրը	Պաշտոնը	Հեռախոսահամար	Հիմնական գործունեության ոլորտը	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

o Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսա-համար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ,
o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես մեղադրյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

o այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,

o Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

- ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ
(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

- Ոչ,
- Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
- Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն | Ամրակցեք ստորագրության նմուշը:

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ համարվելու պահանջները, ինչպես նաև բարձրացնելու ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում,

հիմք ընդունելով հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը, 66-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   ««ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՆՈՒՆԻՑ ԿԱՄ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/05-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարիչների ղեկավարների և ներդրումային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորման կարգը, ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու գրանցման կարգը» Կանոնակարգ 10/05-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (այսուհետ՝ Կանոնակարգ 10/05):»:

3) Կանոնակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

3. Սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարներին մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրված որակավորումները շարունակում են գործել մինչև տվյալ որակավորման ժամկետի ավարտը, եթե ղեկավարը շարունակում է գրանցված մնալ նույն կազմակերպությունում՝ նույն պաշտոնում:

4. Ներդրումային ֆոնդի կառավարիչը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն որոշմամբ հաստատված կանոնակարգով սահմանված ղեկավարի՝ ընկերության ներքին կանոններով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում, եթե.

1) տվյալ ղեկավարը գրանցվել է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը և շարունակում է պաշտոնավարել նույն կազմակերպությունում՝ նույն պաշտոնում, և Կենտրոնական բանկի կողմից նրան տրված որակավորման ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո լրացել է, կամ
2) Կենտրոնական բանկի կողմից տվյալ ղեկավարին տրված որակավորման ժամկետը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո չի լրացել, սակայն ղեկավարը ներկայացվում է գրանցման նոր կազմակերպությունում:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար գրանցված անձինք համարվում են Կենտրոնական բանկում գրանցումից հանված:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 225-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 225-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/05
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՆՈՒՆԻՑ ԿԱՄ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվող կամ գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների ղեկավարների և ներդրումային ֆոնդի կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, ինչպես նաև ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները և գրանցման կարգը:

2. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների ցանկում չներառված և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ղեկավար համարվող անձանց, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի կազմում կամ անունից ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորման և մասնագիտական չափանիշներին համապատասխանության ստուգումն իրականացվում է ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին կանոնակարգերի համաձայն՝ ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին կանոնակարգերի համաձայն որակավորման չափանիշներին բավարարելու դեպքում համարվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող:

3. Ներդրումային ֆոնդի կառավարչի, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղի (այսուհետ՝ ֆոնդի կառավարիչ) ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ կառավարչի, ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:

4. Նոր ստեղծվող ֆոնդի կառավարչի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող մյուս փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում՝ ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կետում նշված մյուս փաստաթղթերը՝ «Փի Դի Էֆ» ֆորմատով:

5. Ոչ հայերեն փաստաթղթերը ներկայացվում են իրավասու մարմնի կողմից հաստատված կամ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և ոչ հայերեն փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում առաջնությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրերով (դիմումներով)՝ ստորագրված կառավարման իրավասու մարմնի կողմից: Ընդ որում՝ սույն կետում նշված միջնորդագրերը (դիմումները) էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում դրանք պետք է ներկայացվեն «Փի-ԴԻ-էֆ» ֆորմատով, իսկ ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Դիմող ընկերության անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 նիշի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	Ֆայլի ընդլայնումը
Օրինակ.								
ԱԲԳ	_	միջնորդագիր	_	Ղեկ. գրանցում	_	250922	.	pdf

ԳԼՈՒԽ 2.
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) «Կենտրոնական բանկ». Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
2) «Հանձնաժողով» Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով,
3) «ղեկավար». Կենտրոնական բանկում գրանցվող ղեկավար, մասնավորապես՝ ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը (գործադիր մարմնի ղեկավարը) և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի ղեկավարը,
4) «հանրային ծառայությունների համարանիշ». Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ, սոցիալական ապահովության քարտի համար, հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
5) «անձնագրի տվյալներ». Անձնագրի սերիան և համարը, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը,
6) «Օրենք». «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
7) «ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար». անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները և որի վրա տարածվում են Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջի,
8) «որակավորման չափանիշներ». ղեկավարի մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ,
9) «մասնագիտական համապատասխանության չափանիշներ». Օրենքով և սույն կանոնակարգով սահմանված՝ ղեկավարի կրթությունը, հմտությունը, փորձառությունն ու բարեվարքությունը բնութագրող չափանիշներ,
10) «որակավորող կազմակերպություն». ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից ընտրված՝ որակավորման չափանիշների ստուգում իրականացնող կազմակերպություն:

8. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3.
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Ղեկավարները պետք է բավարարեն իրենց համար Օրենքի 65-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին ունենան ֆոնդի կառավարչի կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում և գրանցվեն Կենտրոնական բանկում:

10. Ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ֆոնդի կառավարիչը՝ համաձայն ներքին կանոնակարգերի:

11. Ֆոնդի կառավարիչը պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն պետք է սահմանվեն ղեկավարների, ինչպես նաև սույն կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված անձանց որակավորման չափանիշները, ղեկավարների մասնագիտական համապատասխանության չափանիշները, դրանց համապատասխանության գնահատման սկզբունքները և ընթացակարգերը, որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը պատվիրակելու դեպքում՝ որակավորող կազմակերպության նկատմամբ չափանիշները և ընտրության կարգը, ինչպես նաև ղեկավարների գրանցման մերժման հիմքերը ստուգելու գործընթացները և վերջիններիս նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները:

12. Ֆոնդի կառավարիչը ղեկավարների որակավորման չափանիշներին համապատասխանության ստուգման գործընթացը կազմակերպում է ինքնուրույն կամ պատվիրակում է որակավորող կազմակերպությանը:

13. Նոր ստեղծվող ֆոնդի կառավարչի ղեկավարների և սույն կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված անձանց որակավորման չափանիշների համապատասխանության ստուգման գործընթացն իրականացվում է հիմնադիրների կամ հիմնադիրների որոշմամբ՝ որակավորող կազմակերպության կողմից:

14. Ներդրումային ֆոնդի կառավարչի խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ խորհրդի կազմը պետք է բավարարի խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձառության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքին:

15. Կենտրոնական բանկը կարող է ներդրումային ֆոնդի կառավարչի ղեկավարների համար սահմանել տվյալ պաշտոնին համապատասխան միջազգային որակավորում ունենալու պահանջ, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով ընկերության կառավարումը տվյալ ոլորտում արդյունավետ չի իրականացվում:

ԳԼՈՒԽ 4.
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

16. Ֆոնդի կառավարչի ղեկավարը պետք է ունենա՝

1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,
2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, առողջ դատելու և անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի ընկերության գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:

ԳԼՈՒԽ 5.
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

17. Ղեկավարների գրանցումը ներառում է՝

1) թեկնածուի մասնագիտական համապատասխանության գնահատում՝ սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացվող տեղեկատվության (ներառյալ՝ ֆոնդի կառավարչի կողմից սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ հավաստիացում), ինչպես նաև Օրենքով սահմանված մերժման հիմքերի ուսումնասիրության միջոցով,
2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգով սահմանված մասնագիտական համապատասխանության չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված դեպքերի:

18. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար ֆոնդի կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն Հավելված 1-ի,
2) ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Հավելված 2-ի,
3) ոչ ռեզիդենտ ղեկավարի դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր ռեզիդենտության երկրի համապատասխան մարմնի կողմից տրված հավաստում առ այն, որ տվյալ անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, ճանաչված չէ սնանկ,
4) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,
5) հիմնավորումներ և(կամ) վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև որակավորման և մասնագիտական չափանիշներին ղեկավարի համապատասխանության մասին: Հիմնավորումները և վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարի՝ որակավորման և մասնագիտական սահմանված պահանջներին համապատասխանությունը:

19. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:

20. Ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ: Ընդ որում, ղեկավարների գրանցման որոշման ընդունմամբ ղեկավարը միաժամանակ համարվում է Օրենքով նախատեսված մասնագիտական որակավորում ունեցող:

21. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ղեկավարների գրանցման՝ Օրենքով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում՝ գրանցման՝ Օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 30-րդ կետով սահմանված 90-օրյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել 90 օրյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

22. Սույն կանոնակարգի համաձայն ղեկավարներին գրանցելիս ղեկավարների թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:

23. Ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ որակավորման ստուգման և գրանցման ենթակա չէ, և ֆոնդի կառավարիչը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը:

24. Անձի՝ որպես ղեկավարի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում Օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
2) անձը չի համապատասխանում Օրենքով և սույն կանոնակարգով ղեկավարի համար սահմանված պահանջներին:

25. Ղեկավարները գրանցված և որակավորված են համարվում մինչև տվյալ ֆոնդի կառավարչի կազմում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:

ԳԼՈՒԽ 6.
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26. Կենտրոնական բանկի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից հետևյալ դեպքերում՝

1) ֆոնդի կառավարիչը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
2) ֆոնդի կառավարչի լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների գրանցման պահից,
3) խախտվել են օրենքներով և այլ իրավական ակտերով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
4) եթե անձը Կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի ««Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու ուղեցույցը» հաստատելու մասին» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
5) ղեկավարը զրկվել է որակավորումից:

27. Ֆոնդի կառավարչի միջնորդությամբ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցումից հանելու համար ֆոնդի կառավարիչը ղեկավարների կազմում փոփոխություն տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր (գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով)՝ ֆոնդի կառավարչի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
2) ֆոնդի կառավարչի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք փոփոխություն կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

28. Եթե ֆոնդի կառավարչի ղեկավարը հանվել է գրանցումից սույն կանոնակարգի 27-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա, ապա ղեկավարին գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից երեք տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել սույն կանոնակարգի Հավելված 2-ի 1.2-րդ ենթակետում նշված կազմակերպությունների ղեկավար:

ԳԼՈՒԽ 7.
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Ֆոնդի կառավարչի ղեկավարի պաշտոնը կարող է թափուր մնալ ոչ ավելի քան 90 օր՝ սկսած ֆոնդի կառավարչի կողմից ղեկավարին պաշտոնից ազատելու պահից:

30. Ղեկավարի պաշտոնը թափուր մնալու դեպքում կարող է նշանակվել ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև 90 օր ժամկետով: Ընդ որում, 90 օրյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար (միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում 90 օրյա ժամկետը):

31. Սույն կանոնակարգի 31-րդ կետով նախատեսված՝ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում ֆոնդի կառավարիչը նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ (եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից արդեն իսկ գրանցված անձը, ապա կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում):

32. Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 31-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով կազմակերպությանը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում ֆոնդի կառավարիչը պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

33. Ֆոնդի կառավարչի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 225-Ն որոշման

«Հավելված 1
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների ղեկավարների և ներդրումային ֆոնդի
կառավարչի անունից կամ կազմում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց
որակավորման կարգը, ղեկավարների մասնագիտական համապատասխանության
չափանիշներն ու գրանցման կարգը» Կանոնակարգ 10/05-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ ին

Հարգելի

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

գրանցել որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև կազմակերպության կողմից սահմանված մասնագիտական որակավորման չափանիշներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Ֆոնդի կառավարչի կառավարման իրավասու մարմին՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«_____» _____ 20 թ.:»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 225-Ն որոշման

«Հավելված 2
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների ղեկավարների և ներդրումային ֆոնդի
կառավարչի անունից կամ կազմում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց
որակավորման կարգը, ղեկավարների մասնագիտական համապատասխանության
չափանիշներն ու գրանցման կարգը» Կանոնակարգ 10/05-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն
2. Ղեկավար պաշտոն
2.1.Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ

o ներքին աուդիտի ղեկավար
o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ
o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու
o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար)
o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ
o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար
o պատասխանատու ակտուար
o բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
o Հաշվառման հասցե
o Փաստացի բնակության հասցե

3.6 Քաղաքացիություն

3.7 Նշեք՝
o Անձնագրի տվյալները
o Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
o Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
o Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար
○ բջջային
○ այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
Անուն, ազգանուն, հայրանուն
Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու ժամանակաշրջանը (_թ-ից մինչև _թ.)	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարել, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

- Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսա-համար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակց-վածության բնույթը

o Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5.Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:

o Ոչ,
o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1.2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5.12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր, կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5.13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113.3-րդ, 113.5-րդ, 113.6-րդ, 113.8-րդ, 113.9-րդ հոդվածներով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

- այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

- այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

- ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն, ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսահամար

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

o Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

o Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապվածություն:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել

o Ոչ

o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:

o Այո

o Ոչ

13. Հավաստիացնում եմ, որ

ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,

բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին,

գ. բացակայում են ղեկավարի գրանցումը մերժելու համար համապատասխան օրենքներով և կանոնակարգերով սահմանված հիմքերը:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու արդյունավետ ընթացակարգ՝ իրավաբանական անձ ներդրումային ֆոնդերի (կորպորատիվ ֆոնդ) իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու համար,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 62.1-րդ հոդվածը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 61.1-րդ հոդվածը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ, հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ը հաստատելու մասին» թիվ 117-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի (ֆոնդի կանոնների) գրանցումը, օտարերկրյա ներդրումային ֆոնդի արժեթղթերը Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար նախնական թույլտվություն տրամադրելու կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/11-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ բաժնով.

«ԲԱԺԻՆ 6.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

46. Սույն կանոնակարգի 45-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառու:

47. Սույն կանոնակարգի 46-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև կորպորատիվ ներդրումային ֆոնդի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Կորպորատիվ ներդրումային ֆոնդին (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչին (ֆոնդի կառավարումն իրականացնող անձին)) արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցում ստացած անձինք:

48. Կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի:

49. Սույն կանոնակարգի 48-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ ֆիզիկական անձի՝ կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառու համարվելու մասին կորպորատիվ ներդրումային ֆոնդի (ֆոնդի անունից հանդես եկող կառավարչի (ֆոնդի կառավարումն իրականացնող անձի)) տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

50. Անկախ սույն կանոնակարգի 49-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝

1) հաստատում առ այն, որ կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
2) փոփոխված տեղեկություններ կորպորատիվ ներդրումային ֆոնդի իրական շահառուների վերաբերյալ:»:

2) Կանոնակարգը լրացնել Հավելված 8-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 226-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 226-Ն որոշման

«Հավելված 8
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 2-ի թիվ 117-Ն
որոշմամբ հաստատված
կանոնակարգ 10/11-ի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

(կորպորատիվ ներդրումային ֆոնդի անվանումը)

իրական շահառուի վերաբերյալ

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Քաղաքացիություն
3. Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4. Անձը հաստատող փաստաթղթի տվյալները ○ Անձնագրի տվյալները ○ Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
5. Նշեք ○ Հանրային ծառայությունների համարանիշը (Հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը) ○ Կիրառելի չէ
6. Նշեք ○ Հաշվառման վայր ○ Փաստացի բնակության վայր
7. Կապի միջոցները ○ Նշեք հեռախոսահամար բջջային այլ ○ Էլեկտրոնային փոստի հասցե
8. Իրական շահառու դառնալու ամսաթիվը (օր/ամիս/տարի)
9. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (ներկայացնել մանրամասներ, սույն կետի 1-4-րդ ենթակետերի լրացման դեպքում նշել նաև մասնակցության չափը): Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում. 1. ուղղակի տիրապետում է տվյալ ներդրումային ֆոնդի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ 2. անուղղակի տիրապետում է տվյալ ներդրումային ֆոնդի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին, կամ 3. ուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ներդրումային ֆոնդի կանոնադրական կապիտալում, կամ 4. անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն ներդրումային ֆոնդի կանոնադրական կապիտալում, կամ

5. տվյալ ներդրումային ֆոնդի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
6. հանդիսանում է տվյալ ներդրումային ֆոնդի (ֆոնդի անունից հանդես եկող կառավարչի (ֆոնդի կառավարումն իրականացնող անձի)) գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

10. Միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ (միջանկյալ իրավաբանական անձը կորպորատիվ ներդրումային ֆոնդի և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ է»)՝

իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները

իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը

11. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

12. Սույնով հավաստիացնում ենք, որ տեղեկացված ենք և միաժամանակ տեղեկացրել ենք սույն հավելվածով իրական շահառու հանդիսացող անձին առ այն, որ

- սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական,
- տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության,
- հայտարարագրով ներկայացված տվյալները՝ այդ թվում անձնական, Կենտրոնական բանկի կողմից կարող են փոխանցվել կամ բացահայտվել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին,
- ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում կորպորատիվ ներդրումային ֆոնդը (ֆոնդի անունից հանդես եկող կառավարիչը (ֆոնդի կառավարումն իրականացնող անձը)) կտեղեկացնի Կենտրոնական բանկին:

Ֆոնդի կառավարչի կառավարման իրավասու մարմին՝ ----------

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) ----------

Ստորագրություն ----------

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի թիվ 65-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 39.21-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի «Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներն ու կարգը հաստատելու մասին» թիվ 65-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներն ու կարգը» Հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. Կենտրոնական բանկի կողմից իրականացվող հարցազրույցի արդյունքներով արձանագրվում է, որ անձի կրթությունը և (կամ) որակավորումը, մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը բավարարում են տվյալ ֆինանսական խմբի ժամանակավոր կառավարման մարմնի պարտականությունների կատարմանը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 227-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ֆինանսական կազմակերպությունների ղեկավարներ համարվելու պահանջները, ինչպես նաև բարձրացնելու ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը ղեկավարների ընտրության հարցում,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը, 18[1] հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և 22-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 90-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 58-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, 114-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, 179-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետին,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռքբերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցը» թիվ 114-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԼԻՆԵԼՈՒ, ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ**»,

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «**ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու, ղեկավարին գրանցումից հանելու կամ նշանակալից մասնակցություն, այլ մասնակցություն ձեռք բերելու, նշանակալից մասնակցությունը դադարեցնելու ուղեցույց**»՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

3) Որոշմամբ հաստատված «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու, ներդրումային ընկերությունում, կարգավորվող շուկայի օպերատորում, Կենտրոնական դեպոզիտարիայում նշանակալից մասնակցություն ձեռքբերելու կամ ղեկավար լինելու ուղեցույցը» Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 228-Ն

Հավելված
«Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 228-Ն որոշման

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՂԵԿԱՎԱՐ ԼԻՆԵԼՈՒ, ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուղեցույցը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում անձի կողմից ֆինանսական կազմակերպության ղեկավար լինելը կամ ֆինանսական կազմակերպությունում նշանակալից մասնակցության, այլ մասնակցության ձեռք բերումը կարող է մերժվել, ինչպես նաև գրանցված ղեկավարը կարող է գրանցումից հանվել, գործող նշանակալից մասնակցությունը՝ դադարեցվել:

2. Սույն ուղեցույցի իմաստով՝ ֆինանսական կազմակերպություն է համարվում բանկը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը, ապահովագրական ընկերությունը, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղը, ներդրումային ընկերությունը, կարգավորող շուկայի օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան, ներդրումային ֆոնդի կառավարիչը:

ԳԼՈՒԽ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԼԻՆԵԼՈՒ, ԿԱՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԵՐԺՄԱՆ, ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

3. Ֆինանսական կազմակերպության ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն, այլ մասնակցություն ձեռք բերելու դիմումը մերժվում է, գրանցված ղեկավարը հանվում է գրանցումից, գործող նշանակալից մասնակցությունը դադարեցվում է, եթե անձը կամ նշանակալից մասնակցության դեպքում՝ նրա հետ փոխկապակցված անձը անցյալում կատարել է այնպիսի արարք, որը սույն ուղեցույցով հիմնավորված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկի) կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը որպես ֆինանսական կազմակերպության ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել ֆինանսական կազմակերպության գործունեության համապատասխան ոլորտը, կամ տվյալ անձի գործողությունները կարող են հանգեցնել ֆինանսական կազմակերպության սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

4. Կենտրոնական բանկի կողմից քննարկվում են ֆինանսական կազմակերպության ղեկավար լինելու կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու այն անձանց վերաբերյալ դիմումները, որոնք.

1) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
2) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության համար ենթարկվել են քրեական պատասխանատվության,
3) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից ներգրավված են եղել կամ ներգրավված են որպես մեղադրյալ,
4) Վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել են վարչական պատասխանատվության՝ հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում,
5) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կամ այլ պետությունների ֆինանսական կազմակերպություններում հանդիսացել են ղեկավար, աշխատակից կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և որոնց պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում իրենց գործողությունների կամ անգործության հետևանքով ֆինանսական կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ կամ որոնց գործողությունների կամ անգործության հետևանքով ֆինանսական կազմակերպության վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների վատթարացել է,
6) Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում հանդիսացել են ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և որոնց պաշտոնավարման ընթացքում տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ,
7) Անձամբ կամ իրենց հետ փոխկապակցված անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի, վարկային կամ այլ ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ունեն կամ ունեցել են վարքագիծը (պարտաճանաչությունը) բնութագրող էական ժամկետանց (կետանցված) պարտավորություն,
8) 1 տարվա ընթացքում մեկ կամ ավել անգամ ենթարկվել են պատասխանատվության՝ համաձայն ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության,

9) հանդիսացել են ֆինանսական կազմակերպության ղեկավար կամ աշխատակից և իրենց պաշտոնավարման ընթացքում՝

ա. միտումնավոր կերպով խախտել են օրենքները և այլ իրավական ակտերը,

բ. պաշտոնավարման ընթացքում վարել են անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել են վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ Կենտրոնական բանկի, նրա ծառայողների գործողությունները,

գ. կատարել են այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով ֆինանսական կազմակերպությունը կրել է կամ կարող էր կրել զգալի ֆինանսական կամ այլ վնաս,

դ. գործունեության ընթացքում կատարել են անձնական շահերից բխող այնպիսի գործողություններ, որոնք հակասում են ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական կազմակերպության հաճախորդների շահերին,

ե. անազնիվ և անբարեխիղճ վերաբերմունք են դրսևորել իրենց ծառայողական պարտականությունների, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպության և ֆինանսական կազմակերպության հաճախորդների նկատմամբ ստանձնած պարտականությունների նկատմամբ,

զ. չեն կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել են Կենտրոնական բանկի նախազգուշացումը:

10) ՀՀ կամ օտարերկրյա կազմակերպություններում պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում իրենց գործողությունների կամ անգործության հետևանքով եղել են գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց,

11) Որոնց սնանկության վերաբերյալ դիմումը դատարանը վարույթ է ընդունել,

12) Նախորդ աշխատանքից ազատվել են գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ ենթակետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով,

13) Ֆինանսական կազմակերպությունում այլ մասնակցության ձեռք բերման արդյունքում ֆինանսական կազմակերպության նշանակալից մասնակցի մասնակցության նվազումը կամ ամբողջությամբ օտարումը կարող է հանգեցնել ֆինանսական կազմակերպության հեղինակազրկման կամ հեղինակության կամ գործարար համբավի անկման,

14) Ֆինանսական կազմակերպությունում այլ մասնակցության ձեռք բերման արդյունքում ֆինանսական կազմակերպության նշանակալից մասնակցի մասնակցության նվազումը կամ ամբողջությամբ օտարումը կարող է հանգեցնել ֆինանսական կազմակերպության կորպորատիվ կառավարման սկզբունքների խախտմանը, կորպորատիվ կառավարման որակի վատթարացմանը,

15) Նշանակալից մասնակցության կամ այլ մասնակցության ձեռք բերման գործարքը կամ գործարքի նախնական գրավոր համաձայնությունը կասկածելի է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով:

5. Սույն ուղեցույցի 4-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում ֆինանսական կազմակերպությունում նշանակալից, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար գրանցվելու, ինչպես նաև գրանցված ղեկավարին գրանցումից հանելու, գործող նշանակալից մասնակցությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստում և կարող են հիմք հանդիսանալ ֆինանսական կազմակերպությունում նշանակալից, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար գրանցելու դիմումները մերժելու, ինչպես նաև

գրանցված ղեկավարին գրանցումից հանելու, գործող նշանակալից մասնակցությունը դադարեցնելու համար:

6. Կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» թիվ 146-Ն որոշման հիման վրա անձին ղեկավար համարելու դեպքում, եթե առկա է սույն ուղեցույցի 4-րդ կետում նշված հիմքերից առնվազն մեկը, և Կենտրոնական բանկի որոշմամբ այդ անձը չի կարող հանդիսանալ ղեկավար, ապա ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում պետք է վերոնշյալ անձին ազատի զբաղեցրած պաշտոնից կամ սահմանափակի այդ անձի իրավասությունների շրջանակները այնպես, որ նա Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով այլևս չհամարվի ֆինանսական կազմակերպության ղեկավար:

7. Եթե ֆինանսական կազմակերպությունում որպես ղեկավար գրանցվելիս Կենտրոնական բանկի կողմից մեկ անգամ քննարկվել և դրական եզրակացություն է տրվել այն անձանց գրանցման վերաբերյալ դիմումներին, որոնց մոտ առկա է եղել սույն ուղեցույցի 4-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը, ապա նույն ֆինանսական կազմակերպությունում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում կրկին ղեկավար գրանցվելիս նշված անձանց գրանցման վերաբերյալ դիմումները չեն ներկայացվում Կենտրոնական բանկի քննարկմանը, եթե Կենտրոնական բանկի դրական եզրակացությունն ստանալուց հետո նշված անձանց մոտ չեն առաջացել սույն ուղեցույցի 4-րդ կետով նշված հիմքերը:

8. Կենտրոնական բանկը ֆինանսական կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ որպես ղեկավար գրանցվելու համար Կենտրոնական բանկ դիմած անձանցից պահանջում է հայտարարություն այն մասին, որ սույն ուղեցույցի 4-րդ կետում նշված հիմքերը նրանց մոտ բացակայում են:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 146-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից ֆինանսական կազմակերպություններում ղեկավար ճանաչված անձանց կարգավիճակը, ինչպես նաև բարձրացնելու ֆինանսական կազմակերպությունների շահագրգիռ մասնակցությունն ու պատասխանատվությունը անձին ղեկավար ճանաչելու հարցում,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» թիվ 146-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող կամ ինքնուրույն որոշումներ կայացնող անձին ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու չափանիշները» Հավելված 1-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 1-ին կետում «անձը» բառից հետո լրացնել «կամ որևէ կերպ ֆինանսական կազմակերպության հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող աշխատակիցը» բառերը,
2) 3-րդ կետում «անձին» բառից հետո լրացնել «կամ որևէ կերպ ֆինանսական կազմակերպության հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող աշխատակցին», իսկ «քննարկվում են» բառերը փոխարինել «կարող են քննարկվել» բառերով,
3) 4-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը,
4) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ֆինանսական կազմակերպության աշխատակցին սույն իրավական ակտի իմաստով ֆինանսական կազմակերպության ղեկավար ճանաչելու համար Կենտրոնական բանկի խորհուրդը ընդունում է որոշում և անձին գրանցում է այն հաստիքում, որը

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. դեկտեմբերի 14-ին (ՀՀԳՏ, 23.12. 2022):

տվյալ պահին զբաղեցնում է, եթե անձը բավարարում է ղեկավարի համար օրենքով սահմանված պահանջներին:»,

5) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետ.

«7. Եթե 6-րդ կետում նշված անձը գրանցման պահին չի բավարարում ղեկավարի համար օրենքով սահմանված պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների համար սահմանված մասնագիտական և որակավորման համապատասխանության չափանիշներին, ապա սահմանափակվում են վերջինիս այն իրավասությունները, որոնք հիմք են հանդիսացել ղեկավար ճանաչելու հարցը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին ներկայացնելու համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից չորս ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
21 դեկտեմբերի 2022 թ., N 229-Ն

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 218
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 222
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 227
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 228
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 239
Տոկոսադրույքներ
Բանկային փոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 261
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 271
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 273
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 283
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2022 թ. նոյեմբեր*	*2022 թ. նոյեմբերի իրական աճի փոփոխությունը 2021 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*2022 թ. դեկտեմբեր*	*2022 թ. դեկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2021 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		13.8		12.9
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	254762.2[1]	-2.3	299687.0	3.3
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	66940.9	11.3	113405.9	7.3
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	422682.0	22.1	523777.6	23.9
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	240039.1	30.9	261438.1	27.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	803.9	17.3	905.9	9.6
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	310774 [1]	14.3[2]	398959 [3]	11.8[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2022 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.6	0.9	0.8	4.0
Փետրվար	0.1	3.7	1.3	0.2
Մարտ	1.8	2.0	-0.8	-0.2
Ապրիլ	2.3	-2.4	0.5	-1.3
Մայիս	0.1	-3.1	1.0	-4.5
Հունիս	0.3	-2.9	0.1	-8.4
Հուլիս	-1.4	-4.3	-0.1	-10.3
Օգոստոս	0.2	-1.8	0.1	-15.4
Սեպտեմբեր	0.6	2.9	-0.2	-6.2
Հոկտեմբեր	0.3	0.7	0.0	4.7
Նոյեմբեր	1.1	0.8	0.4	4.0
Դեկտեմբեր	1.1	3.5	-0.4	5.2
2022 թ. հունվար - դեկտեմբերը 2021 թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ	8.6	2.6	6.0	13.4

ԳՆԱՃ

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.4	2.2	1.6
Փետրվար	-0.2	0.6	0.1
Մարտ	0.5	1.0	1.8
Ապրիլ	0.9	1.3	2.3
Մայիս	-0.1	-0.4	0.1
Հունիս	-1.4	-0.8	0.3
Հուլիս	-2.1	-0.5	-1.4
Օգոստոս	-0.1	0.4	0.2
Սեպտեմբեր	-0.2	-0.1	0.6
Հոկտեմբեր	0.5	0.7	0.3
Նոյեմբեր	1.3	1.7	1.1
Դեկտեմբեր	3.4	1.6	1.1
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	4.5	7.1
Փետրվար	-0.5	5.3	6.5
Մարտ	-0.1	5.8	7.4
Ապրիլ	0.9	6.2	8.4
Մայիս	1.2	5.9	9.0
Հունիս	1.7	6.5	10.3
Հուլիս	1.5	8.2	9.3
Օգոստոս	1.8	8.8	9.1
Սեպտեմբեր	1.4	8.9	9.9
Հոկտեմբեր	1.3	9.1	9.5
Նոյեմբեր	1.6	9.6	8.8
Դեկտեմբեր	3.7	7.7	8.3

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	2022 թ. դեկտեմբերը 2021 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**8.3**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	10.0	3.78
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	8.9	0.34
Հագուստ և կոշիկ	7.2	0.15
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	8.2	1.30
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	13.1	0.59
Առողջապահություն	3.1	0.26
Տրանսպորտ	6.1	0.58
Կապ	0.6	0.03
Հանգիստ և մշակույթ	9.8	0.17
Կրթություն	4.7	0.19
Ռեստորաններ և հյուրանոցներ	8.8	0.09
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	12.8	0.82

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.7	0.3
Փետրվար	0.1	0.8	0.6
Մարտ	0.0	0.8	1.1
Ապրիլ	0.5	0.6	1.3
Մայիս	0.0	0.4	0.7
Հունիս	-0.1	0.3	1.0
Հուլիս	-0.1	0.3	0.7
Օգոստոս	0.1	0.3	0.4
Սեպտեմբեր	0.3	0.3	0.7
Հոկտեմբեր	0.3	0.4	0.3
Նոյեմբեր	0.3	0.6	0.3
Դեկտեմբեր	0.9	0.5	0.4
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	3.0	5.8
Փետրվար	0.4	3.7	5.6
Մարտ	0.3	4.6	5.9
Ապրիլ	0.8	4.6	6.6
Մայիս	0.8	5.1	7.0
Հունիս	0.7	5.5	7.8
Հուլիս	0.8	5.9	8.3
Օգոստոս	0.8	6.1	8.3
Սեպտեմբեր	0.9	6.1	8.7
Հոկտեմբեր	1.2	6.2	8.6
Նոյեմբեր	1.4	6.6	8.2
Դեկտեմբեր	2.2	6.2	8.1

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2022 թ. դեկտեմբերը 2021 թ. դեկտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**8.1**	
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	27.0	0.84
Հաց ցորենի՝ բարձր տեսակի	14.9	0.64
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղերի համար	63.0	0.62
Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ	47.1	0.30
Պանիր կովի կաթից	19.3	0.28
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	4.6	0.27
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	15.7	0.22
Բարձրագույն կրթության հաստատությանը վճարված ուսման վարձը	4.6	0.16
Մազերի ներկ	33.1	0.16
Օճառահեղուկ (շամպուն)	24.6	0.16
Պանիր տնական	22.0	0.12
Մածուն	19.2	0.11
Թխվածքաբլիթ, պաքսիմատ, վաֆլու շերտեր	21.4	0.11
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	19.0	0.10
Բենզին	-14.8	-0.12

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2022 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - նոյեմբերը 2021 թ. հունվար - նոյեմբերի նկատմամբ (%)	2022 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - դեկտեմբերը 2021 թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	4749.2	175.2	5360.1	177.7
Ներմուծում *(ՍԻՖ)*	7739.8	163.6	8768.7	163.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2990.6	148.1	3408.6	145.3

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2021 թվական					
	դեկտեմբեր			հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	83683	45762	37921	865580	401807	463773
ԱՄՆ	62573	18362	44212	580327	189049	391278
Ուկրաինա	1798	1915	-117	18692	19714	-1022
Ղազախստան	7185	578	6607	89282	5878	83404
Գերմանիա	5718	3752	1965	67497	32427	35070
Իսպանիա	1544	2886	-1342	15029	18195	-3165
Ֆրանսիա	5145	3637	1508	56491	21189	35301
ԱՄԷ	2425	8958	-6533	24829	43274	-18445
Չինաստան	179	9575	-9396	2299	78198	-75899
Թուրքիա	119	561	-442	1603	6166	-4563
Այլ երկրներ	40053	37151	2902	387307	409724	-22417
Ընդամենը	**210424**	**133137**	**77287**	**2108936**	**1225622**	**883315**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2022 թվական					
	դեկտեմբեր			հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	422897	60461	362436	3598175	452967	3145207
ԱՄՆ	63428	40213	23215	670949	327766	343183
Ուկրաինա	71	2473	-2402	3945	23333	-19389
Ղազախստան	3955	788	3167	56352	8662	47690
Գերմանիա	7181	9517	-2335	77781	111147	-33366
Իսպանիա	2237	8547	-6310	16770	66682	-49912
Ֆրանսիա	5952	3846	2106	59350	50053	9297
ԱՄԷ	4422	39169	-34747	38278	275314	-237036
Չինաստան	387	10979	-10591	3937	88813	-84877
Թուրքիա	126	1976	-1851	1515	11762	-10247
Այլ երկրներ	80276	111102	-30826	663359	1190266	-526907
Ընդամենը	**590932**	**289069**	**301862**	**5190411**	**2606767**	**2583644**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2021 թվական					
	դեկտեմբեր			հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	40575	22165	18410	433942	201931	232010
ԱՄՆ	30345	8910	21435	291225	95098	196127
Ուկրաինա	872	931	-58	9375	9877	-502
Ղազախստան	3487	279	3208	44789	2948	41841
Գերմանիա	2772	1826	946	34052	16319	17733
Իսպանիա	747	1401	-654	7560	9097	-1537
Ֆրանսիա	2493	1765	729	28519	10621	17897
ԱՄԷ	1175	4341	-3166	12408	21473	-9064
Չինաստան	86	4631	-4545	1155	39154	-37999
Թուրքիա	58	273	-215	810	3080	-2270
Այլ երկրներ	19425	18088	1337	194397	205780	-11382
Ընդամենը	**102035**	**64610**	**37426**	**1058232**	**615379**	**442853**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2022 թվական					
	դեկտեմբեր			հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	166810	23844	142966	1505526	195944	1309582
ԱՄՆ	25017	15871	9146	290816	140255	150561
Ուկրաինա	28	975	-947	1867	10029	-8162
Ղազախստան	1560	311	1249	24358	3723	20635
Գերմանիա	2833	3757	-923	33611	46816	-13204
Իսպանիա	882	3373	-2491	7271	27869	-20598
Ֆրանսիա	2347	1518	830	25988	21263	4725
ԱՄԷ	1744	15452	-13708	16391	115524	-99132
Չինաստան	153	4332	-4179	1667	38044	-36377
Թուրքիա	50	779	-729	662	5038	-4376
Այլ երկրներ	31670	43827	-12156	285395	499300	-213905
Ընդամենը	**233095**	**114038**	**119057**	**2193554**	**1103805**	**1089749**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2021	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	140.1	139.6	140.5	142.9	140.4	140.8	147.6	147.6	147.5	150.3	154.8	157.1
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	292.5	291.8	293.3	296.4	294.0	298.8	316.4	316.5	318.8	326.4	333.7	337.4
2022	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	159.1	157.9	162.7	164.8	165.7	174.3	180.2	185.5	186.3	190.4	192.9	195.8
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	340.9	342.5	358.2	360.5	365.5	389.0	409.8	423.4	426.5	439.5	442.2	445.0

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:

[2] Բոլոր փվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[3] Աճը նշանակում է արժևորում:

[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փվյալները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով: Սկսած 2018 թվականի հունվարից՝ ԻԻՀ կենտրոնական բանկի փվյալների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փվյալները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2021	2022											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ[3]	Հ	Օ	Ս[3]	Հ	Ն	Դ[4]
Համախառն միջազգային պահուստներ	**3229.9**	**3138.1**	**3012.6**	**2940.3**	**3068.4**	**3151.2**	**3450.6**	**3546.2**	**3621.5**	**3739.1**	**3633.1**	**3518.0**	**4109.5**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	32.8	32.6	31.1	51.4	49.8	46.6	28.2	24.4	20.6	18.9	19.1	23.2	6.2
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	3197.0	3105.5	2981.6	2889.0	3018.6	3104.6	3422.3	3521.8	3601.0	3720.2	3614.1	3494.8	4103.3

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2021	2022											
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Ս[2]	Հ	Ն	Դ[3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**758.6**	**768.2**	**775.7**	**800.5**	**808.4**	**873.5**	**892.7**	**829.0**	**819.8**	**811.6**	**820.3**	**848.2**	**840.2**
ԱՄՀ վարկ	109.7	109.1	109.1	107.1	103.8	137.7	122.1	117.4	115.8	112.4	113.5	114.2	100.2
ՀՓԻ տեղաբաշխում	296.0	294.1	294.8	292.6	283.5	285.4	282.1	279.0	276.1	270.5	273.0	278.5	282.7
Այլ վարկեր	349.2	361.5	369.6	368.5	384.2	401.8	418.0	431.3	425.5	426.1	426.7	452.5	453.9
Այլ պարտավորություններ	3.7	3.4	2.1	32.3	36.9	48.5	70.4	1.3	2.4	2.6	7.0	2.9	3.5

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ՝ ԾԻԳ-ի միջոցները)	
2021			
Դեկտեմբեր[1]	9698	403542	**-393844**
2022			
Հունվար	9780	482083	**-472303**
Փետրվար	9598	464595	**-454997**
Մարտ	9270	503701	**-494431**
Ապրիլ	8969	487067	**-478098**
Մայիս	9149	487627	**-478478**
Հունիս	9147	530485	**-521338**
Հուլիս	9217	515641	**-506424**
Օգոստոս	9080	503842	**-494763**
Սեպտեմբեր	8997	507727	**-498731**
Հոկտեմբեր	8801	437441	**-428640**
Նոյեմբեր	8800	371644	**-362844**
Դեկտեմբեր	8862	381457	**-372595**

[1] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա[1] (մլն ՀՀ դրամ)	Շրջանառության մեջ կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1[2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2[3] (մլն ՀՀ դրամ)	Կրոսվալյութային ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X[4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատիկ[5]	Դրամային պահուստի բազմապատիկ[6]
2021										
Դեկտեմբեր	1830705	636088	731216	1367304	1095528	2462832	1339774	3802606	2.08	2.08
2022										
Հունվար	1641948	581244	693873	1275118	1121345	2396463	1339232	3735695	2.28	2.37
Փետրվար	1579396	560377	692190	1252568	1132112	2384680	1371985	3756665	2.38	2.39
Մարտ	1607433	584838	701905	1286743	1128286	2415029	1388970	3803999	2.37	2.24
Ապրիլ	1618402	577186	713991	1291178	1133169	2424347	1301345	3725691	2.30	2.25
Մայիս	1591449	583032	735799	1318831	1135750	2454581	1361002	3815583	2.40	2.38
Հունիս	1692357	610648	753364	1364011	1124263	2488274	1325745	3814019	2.25	2.21
Հուլիս	1666241	611996	803589	1415585	1093111	2508696	1387507	3896204	2.34	2.47
Օգոստոս	1633280	622637	843465	1466102	1094549	2560651	1397257	3957908	2.42	2.61
Սեպտեմբեր	1778555	638551	836332	1474883	1090893	2565776	1484206	4049982	2.28	2.37
Հոկտեմբեր	1723378	635566	890450	1526017	1093005	2619021	1507020	4126041	2.39	2.38
Նոյեմբեր	1610992	639424	918859	1558283	1115842	2674124	1571277	4245401	2.64	2.66
Դեկտեմբեր	1922051	675703	1004292	1679995	1113734	2793729	1621243	4414973	2.30	2.35

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
2000000
1800000
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ՀԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
5000000
4500000
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2021					
Դեկտեմբեր	1652830	595844	1285113	2379895	3708664
2022					
Հունվար	1671765	584705	1285736	2408319	3740476
Փետրվար	1627226	576859	1269489	2392663	3744687
Մարտ	1607675	601765	1300820	2432865	3784547
Ապրիլ	1654277	595859	1321024	2469604	3794324
Մայիս	1617993	597162	1340527	2491253	3848815
Հունիս	1672814	611386	1368378	2503155	3851961
Հուլիս	1667716	604078	1392796	2493643	3894733
Օգոստոս	1647087	609605	1445726	2534256	3931024
Սեպտեմբեր	1753684	627155	1462193	2556951	4042913
Հոկտեմբեր	1740906	627256	1512916	2609677	4096500
Նոյեմբեր	1663149	635165	1553598	2689260	4254667
Դեկտեմբեր	1726615	634546	1584622	2702686	4296656

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2000000
1500000
1000000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3300000
2900000
2500000
2100000
1700000
1300000
900000
500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
4600000
4200000
3800000
3400000
3000000
2600000
2200000
1800000
1400000
1000000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2021	2022											
	Դ[2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Մ[2]	Հ	Ն	Դ[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1186554***	***1144135***	***1082518***	***1039788***	***1024374***	***1020392***	***1041568***	***1107826***	***1133443***	***1187545***	***1112191***	***1054230***	***1286680***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***644150***	***497813***	***496878***	***567646***	***594028***	***571058***	***650789***	***558415***	***499836***	***591009***	***611187***	***556762***	***635371***
Կառավարություն	-393844	-472303	-454997	-494431	-478098	-478478	-521338	-506424	-494763	-498731	-428640	-362844	-372595
Բանկեր	696379	621756	604884	706432	702951	659013	750236	636880	561902	662521	593758	471017	528267
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	485415	410446	380428	445106	438344	385598	445194	330341	252000	322180	257847	140000	234709
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	-2001
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	341615	348361	346991	355645	369175	390523	421891	427960	432697	427220	446068	448589	479698
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1830705***	***1641948***	***1579396***	***1607433***	***1618402***	***1591449***	***1692357***	***1666241***	***1633280***	***1778555***	***1723378***	***1610992***	***1922051***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	747166	687813	668779	676462	672631	680165	708136	719859	726574	748565	747340	747598	803094
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	408818	294449	298984	369942	372639	320638	387618	263463	223373	301147	320967	229811	360682
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	635070	615868	572298	519596	531190	550712	556925	641125	645524	687442	618557	599008	727804
Այլ հաշիվներ	39651	43818	39336	41433	41942	39934	39678	41794	37808	41400	36515	34574	30471
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	27555	30227	29866	31787	32686	30964	31147	31828	31946	31537	31916	29351	27352
